Ազգ
Azg
7 ՆՈՅԵՄԲԵՐ 2012 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 197(5049)
ISSN: 1829-1651

# Դասավո՞ր դառնալ, թե՞ հայրենիքը պաշտպանել

## *Որքանո՞վ է բարոյական դասավորների 823 հազար դրամ միջին աշխատավարձը*




ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Այս օրերին Ազգային ժողովի հանձնաժողովներում քննարկվում է 2013-ի պետական բյուջեի նախագիծը: Բախվում են տեսակետներ, հնչում են մեղադրանքներ, պոպուլիստական կոչեր, իշխանության ներկայացուցիչների եւ ընդդիմադիր պատգամավորների միջեւ մեկ լուրջ, մեկ կիսահեգնական տոնով «փոխհրաձգություններ» են բռնկվում: Սակայն ցավալի է, որ պետբյուջեի նախագծում փոփոխման ենթակա դրույթները պատգամավորները չեն նկատում կամ գոնե ձեւ են անում, թե չեն նկատում: Թե ինչո՞ւ՝ փոքր-ինչ ուշ, իսկ հիմա՝ թե ինչը չեն նկատում:

Խոսքը պետական համակարգում աշխատավարձերի առնչությամբ ստեղծված խիստ անարդար կացությանն է վերաբերում: Ոչ մի հիմնավորում, թե ինչո՞ւ է ստեղծվել նման իրավիճակը եւ ոչ մի անդրադարձ այդ իրավիճակը կանոնակարգելու անհրաժեշտության մասին: Ներկայացնենք ասվածին առնչվող մի առավել ակնառու օրինակ:

Տես էջ 3

# Global Post-ը «մատնո՞ւմ է» Ադրբեջանին

Հղում անելով ամերիկյան Global Post ամսագրին, Vesti.az-ը գրում է, որ ԱՄՆ ԿՀՎ մի «նախկին գործակալ, որ շարունակում է խորհրդատվություններ տալ կառավարական կառույցներին Իրանի հարցում, կարծիք է հայտնել, որ Ադրբեջանը հայտնվել է փակուղային վիճակում»: Ըստ այդմ, Իրանում «կասկածում են, որ Ադրբեջանը կարող է Իսրայելին տրամադրել իր ռազմական օդանավակայանները՝ անօդաչու սարքավորումների միջոցով Իրանին հարվածելու համար»:

ԿՀՎ անանուն գործակալը նաեւ ասել է, որ «Իրանում եզրակացության են եկել, որ միջուկային բնագավառի գիտնականների սպանությունները եւ նրանց դեմ հարձակումները կազմակերպել է իսրայելական ՄՈՍՍԱԴ-ը՝ ոչ առանց Ադրբեջանի օգնության»: Համադրելով, ԿՀՎ գործակալը ասել է, որ «իրանական հետախուզությունը որոշել է Ադրբեջանում իսրայելական օբյեկտները եւ կարող է դրանք խոցել»:

Հնարավոր է՝ ոչ մի «ԿՀՎ նախկին գործակալ» ոչինչ էլ չի ասել, եւ ամերիկյան ամսագրի հրապարակման հիմքը միայն «պարզ ենթադրություններն են»: Հակառակը նույնպես չի կարելի բացառել՝ որ իրոք ԿՀՎ-ն է «արտահոսքի» աղբյուրը: Բայց այս դեպքում կստացվի, որ ամերիկացիները «մատնում են տարածաշրջանում իրենց կարեւորագույն դաշնակցին»՝ Ադրբեջանին: Իլհամ Ալիեւի աշխատակազմի պատասխանատուներից Ալի Հասանովը, որ, ըստ contact.az-ի «կոնֆիդենցիալ իրազեկվածության վերջերս գաղտնի առաքելությամբ եղել է Մոսկվայում», կարծիք է հայտնել, թե «ով էլ ընտրվի նախագահ, ԱՄՆ-Ադրբեջան հարաբերությունները կզարգանան վերընթաց»:

Այս լավատեսության ֆոնի վրա ամերիկյան ամսագրի հրապարակումը «կարկասանի» տպավորություն է թողնում: Բայց մեզ այլ հարց է հուզում: Մի քանի օր առաջ Ադրբեջանի ներքին զորքերի հրամանատարը հայտարարել էր, որ «պատերազմի վերսկսման դեպքում հայ զինվորականներին կփրկի միայն փախուստը»: Նրա գնահատմամբ՝ «օկուպացված տարածքների ազատագրումը» կարող է լինել «մեկ-երկու օրվա հարց»:

Չնայած դրան, գալիք տարի Ադրբեջանի ռազմական համախառն բյուջեն կգերազանցի 4 մլրդ դոլարը: Ինչպես հայտնի է, Ադրբեջանին զենք եւ զինամթերք մատակարարող երկրների շարքում «պատվավոր» առաջին տեղում Իսրայելն է: Ամերիկյան ամսագրի՝ Ադրբեջանի ռազմական օդանավակայաններից անօդաչու թռչող սարքերի միջոցով Իրանին հարվածելու իսրայելական ծրագրի մասին ասվածը մղում է ենթադրության: Այն է՝ իսկ գուցե Ադրբեջանը Իսրայելից ոչինչ էլ չի՞ գնում՝ զենք, սպառազինություն եւ այլն: Գուցե այդ ամենը Ադրբեջան է հասցվում գործարքի անվան տակ, բայց իրականում շարունակում մնալ որպես իսրայելական կողմի սեփականությո՞ւն: Մասնավորապես՝ անօդաչու թռչող սարքավորումները, եթե դրանք «պետք է հարվածեն Իրանին», ինչպես ասված է ամերիկյան ամսագրի հրապարակման մեջ:

«Միացյալ Նահանգները որպես ԵԱՀԿ Մինսկի համանախագահ երկիր պետք է Հայաստանին կառուցողականություն պարտադրի»՝ ԱՄՆ-Ադրբեջան հետագա հարաբերությունները դրանով է «պայմանավորում» Ալի Հասանովը: Իսրայելի կողմից Իրանին հարվածելու հարցում Վաշինգտոնի ներկայիս վարչակազմը, գոնե հրապարակայնորեն, դեմ է արտահայտվում: Ադրբեջանի հավանական ներգրավվածությունը Իսրայել-Իրան լարված հարաբերություններում, հետեւաբար, պետք է մտահոգիչ լինի ԱՄՆ-ի համար: Իսկ գուցե հենց դա՞ է Global Post-ի հրապարակման բուն ասելիքը:

ՎԱՀՐԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ

# Արցախի վարչապետ. «Ղարաբաղի հարցի լուծումը Ղարաբաղում է»

Արցախն ապագայում ԼՂՀ վարչապետ **Արա Հարությունյանը** պատկերացնում է որպես անկախ, ինքնուրույն, զարգացող երկիր, ինչպիսին որ այսօր է. «Առաջիկա մի 15-20 տարին միանշանակ անկախ եմ պատկերացնում, կապ չունի՝ կձեւակերպվի՞ միջազգայնորեն, թե ոչ, բացի այդ՝ ձեւակերպել հարցը, նշանակում է զիջումների գնալ, որը մենք չենք ուզում»:

Բայց ձեզնի՞ց է կախված, հետաքրքրվեց «**Ազգը**». «Բա ումի՞ց է կախված»: Մեծ պետություններից, տարածաշրջանային շահերից, աշխարհաքաղաքական իրավիճակից՝ ասում ենք. «Ի՜, դե լավ, է: Մենք դրա հետ համամիտ չենք: 1988 թվականին մենք մտածում էինք, որ մեծ պետություններից է կախված, 1992-ին հասկացանք, որ մեզնից է կախված: Թող ես մնամ իմ կարծիքին, եւ մարդիկ, որ իրենց քաղաքագետներ, գեոպոլիտիկներ են համարում՝ թող մնան իրենց կարծիքին: Ես կարծում եմ, որ Ղարաբաղի հարցի լուծումը Ղարաբաղում է: Կախված է նրանից՝ որքա՞ն ենք մենք պատրաստ պաշտպանվելու: Չմոռանանք 1992-1993 թվականները, երբ ազատագրում էինք մեր տարածքները: Ինչո՞ւ Թուրքիան որեւէ քայլ չձեռնարկեց: Բանակցությունների հետ կապված առաջիկա 10-15 տարում ոչ մի նոր բան չեմ սպասում»:



Եթե Ադրբեջանը սխալ հաշվարկ անի եւ փորձ անի ռազմական ճանապարհով խնդիր լուծե՞լ. «Դա կլինի Ադրբեջանի կործանումը»:

Մ. Խ.

# Պոլիմերային հումքի պակաս Հայաստանում

Իրանի Իսլամական Հանրապետությունը դադարեցրել է 52 անվանում ապրանքատեսակների արտահանումը արտերկիր, որի պատճառով շուրջ երկու շաբաթ ընդհատվել է պոլիմերային հումքի (պոլիէթիլեն, պոլիպրոպիլեն, պոլիստիրոլ ) ներկրումը Հայաստան, ինչը խիստ բացասաբար կանդրադառնա հատկապես սննդարդյունաբերության եւ գյուղատնտեսության ոլորտների վրա: Այլ երկրներից հումքի ներկրումը ապահովելու համար կպահանջվի առնվազն 3040 օր եւ բնականաբար ավելի թանկ գնով, ինչը կբերի նաեւ ապրանքների գնաճի: Հայաստանի արդյունաբերողների եւ գործարարների (գործատուների) միությունը դիմել է ՀՀ վարչապետ Տ. Սարգսյանին՝ խնդրելով նրա միջամտությունը առաջացած խնդիրը Իրանի համապատասխան մարմինների հետ լուծելու նպատակով:

ՀԱԳ(Գ)Մ լրատվական ծառայություն

# ՌԴ պաշտպանության նախարարի փոփոխություն

Երեքշաբթի օրը ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինը պաշտոնանկ է արել երկրի պաշտպանության նախարար Անատոլի Սերդյուկովին: Նրա պաշտոնում նշանակվել է Սերգեյ Շոյգուն, որը մինչեւ վերջերս զբաղեցնում էր Մոսկվայի մարզի նահանգապետի պաշտոնը: ԻՏԱՌ-ՏԱՍՍ գործակալությունը հաղորդում է, որ նախագահը կադրային փոփոխությունների մասին հայտնել է Սերգեյ Շոյգուի հետ հանդիպման ժամանակ:

Հոկտեմբերի վերջերին քննիչները միանգամից 5 քրեական գործ էին հարուցել պաշտպանության նախարարությանը ենթակա «Օբորոնսերվիս» ԲԲԸ-ի հողերի ու բաժնետոմսերի հետ կապված մեքենայությունների կապակցությամբ: Դրանց վնասը կազմում է առնվազն 3 մլրդ ռուբլի: Կասկածյալներից մեկը պաշտպանության նախարարության գույքային հարաբերությունների վարչության նախկին պետ Եվգենիա Վասիլեւան է:



«Պաշտպանության նախարարության շուրջը ստեղծված իրավիճակը հաշվի առնելով եւ բոլոր հարցերի անաչառ քննության պայմաններ ստեղծելու նպատակով ես որոշեցի պաշտպանության նախարար Սերդյուկովին ազատել զբաղեցրած պաշտոնից», ասել է Պուտինը: Նա միաժամանակ նշել է, որ վերջերս զգալի գործ էր արվել զինվորականների բնակարանային խնդիրների լուծման համար:

# «Իմ պաշտպանյալը չի արատավորել թուրք զինվորի պատվաբեր համազգեստը»

## *Դատապաշտպանը նկատի ունի Սեւակ Շահինի մարդասպանին*

ՀԱԿՈԲ ՉԱՔՐՅԱՆ

**2011-ի ապրիլի 24-ին, երբ Դիարբեքիրի վիլայեթին հարող Բաթմանի զորամասերից մեկում այսպես կոչված պատահական կրակոցով սպանվեց ժամկետային զինծառայող Սեւակ Շահինը, գրել էինք, որ սպանությունը Հայոց ցեղասպանության թուրքական ժխտողականության չարանենգ արձագանքն է:**

**Թուրքահայ Սեւակի՝ Մեծ եղեռնը խորհրդանշող օրն իրականացված սպանությամբ թուրք հրոսակը փորձում էր ազդանշան տալ Հայոց ցեղասպանությունը ճանաչելու պատրաստակամություն դրսեւորող երկրներին, թե Թուրքիայի հայերը պատանդ են ինչպես թուրքական պետության, այնպես էլ արյունարբու թուրք զանգվածների համար, որոնք նույնիսկ 21-րդ դարում փոխանակ ձգտելու, որ գոնե մի քիչ մարդու կերպարանք ստանան, ստոր մարդասպանով են հիանում:**

**Այդ երկրներին շանտաժի ենթարկելիս, հրոսակը միաժամանակ սաստում էր երկրում Հայոց ցեղասպանության մասին հրապարակավ արտահայտվող հասուկենտ մտավորականներին, նրանց հետ թուրքահայերին, ինչու չէ նաեւ Հայաստանին:**

**Այդ փորձով թուրք հրոսակն ընդամենը ցույց տվեց իր մարդասպան դեմքը: Խնդիրը, սակայն արյունարբու հրոսակի դեմքը չէ, հայ ժողովուրդը քաջածանոթ է այդ դեմքին, այլ Սեւակ Շահինի սպանության վերաբերյալ մեր կարծիքի ակամա հաստատումը դատական 9-րդ նիստում, որը, ինչպես նշել էինք նախորդ համարում, տեղի էր ունեցել երկուշաբթի օրը:**

**Սեւակ Շահինի սպանության գործով ռազմական ատյանի դատական այս նիստին երեկ Դիարբեքիրից անդրադարձել է «Էվրենսել» թերթը, վկայակոչելով քրդական «Դիջլե» լրատվական գործակալությանը, որի հրապարակումն արտատպել է Կ. Պոլսո հայոց պատրիարքարանի ոչ պաշտոնական խոսափող «Հայթերթ» կայքէջը:**

**Նիստը, ըստ «Էվրենսելի», տեղի է ունեցել Դիարբեքիրի մարտավարական ռազմաօդային երկրորդ ուժերի հրամանատարությանն առընթեր ռազմական ատյանում: Ներկա են գտնվել մարդասպան Քըվանչ Աղաօղլուն, Սեւակ Շահինի ընտանիքն ու նրանց դատապաշտպանները:**

**Մարդասպանի դատապաշտպան Իբրահիմ Գյոքը տուժող կողմին մեղադրել է դատական գործընթացն իրավական հարթությունից քաղաքական հարթություն փոխադրելու եւ քաղաքական կուսակցություններին դատական գործում ներգրավելու մեջ:**

Տես էջ 2

# Ադրբեջանը՝ Երեւանի «էժան տրյուկի» զո՞հ

Ավստրալիայի Նոր Հարավային Ուելսի խորհրդարանի իրավական խորհուրդը հոկտեմբերի 25-ին բանաձեւ էր ընդունել, որով ճանաչում էր Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անկախությունն ու հայերի ինքնորոշման իրավունքը, որոնք իրենց ճնշումներ գործադրող Ադրբեջանից անկախ են հռչակել 20 տարի առաջ: «**Ազգը**» տեղեկացրել է, որ փաստաթղթում նաեւ ընդգծվում էր, որ 2012-ը շեշտվում է որպես «ԼՂՀ անկախության հռչակման 20-ամյա հոբելյանի տարի՝ ի գիտություն ընդունելով ինքնորոշման իրավունքի ու ազատ եւ ժողովրդավարական հասարակությունում մարդու հիմնարար իրավունքների կարեւորությունը»:

Փաստաթղթի համաձայն, վերը նշված ավստրալական խորհուրդը «ճանաչում է մարդկանց, այդ թվում՝ ԼՂՀ բնակչության, ինքնորոշման իրավունքը»: Բանաձեւը սեփական կառավարությանը կոչ էր անում «պաշտոնապես ճանաչել Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը եւ ամրապնդել Ավստրալիայի հարաբերությունները ԼՂ-ի ու նրա բնակիչների հետ»:

Սրան հետեւեց Ադրբեջանի արտաքին գործերի նախարարության պաշտոնական ներկայացուցչի արձագանքը, թե «ավստրալական «նահանգի տեղական օրենսդիր մարմնի մեկ-երկու ներկայացուցիչ ենթարկվող մեխանիզմ են դարձել հայկական սփյուռքի ձեռքին», նաեւ հիշեցնելով, թե Ավստրալիան քանիցս «աջակցություն է հայտնել Ադրբեջանի տարածքային ամբողջականությանը»՝ չճանաչելու դիրքորոշում արտահայտելով ԼՂ առնչությամբ:

Առավել հետաքրքրական է, որ Ադրբեջանի ԱԳՆ ներկայացուցիչն իր խոսքում Երեւանին մեղադրել էր, թե վերջինս փորձում է «1-2 պատգամավորի» տեսակետը մատուցել որպես ԼՂՀ ճանաչում, ինչն «էժան տրյուկ է»: Սակայն, ինչպես շատ պարագաներում, ադրբեջանական իրողությունների մեկը մյուսից անտեղյակությունն այս հարցում էլ դերակատարություն ունի, քանի որ ԱԳՆ-ի վերը նշված հայտարարությանը երեկ հետեւել է պաշտոնական նոտան Ավստրալիային՝ հետաքրքրական հասցեավորմամբ:

Բանն այն է, որ ադրբեջանական մամուլի տեղեկացմամբ, Անկարայում Ադրբեջանի դեսպանությունն է պաշտոնական նոտա հղել Ավստրալիայի դեսպանատանը՝ ԼՂՀ ճանաչման փաստաթղթի ընդունման առնչությամբ: Եվ եթե այդ փաստաթուղթը Երեւանի «էժան տրյուկներից» էր, ապա առնվազն տարօրինակ է, որ Ադրբեջանի դեսպանությունը Անկարայում գնացել է այդ տրյուկի հետեւից:

Ինչպես ասում են՝ փաստերն առավել խոսուն են...

Վ. Պ.

# Մղձավանջի երկիր՝ Ադրբեջան

Ադրբեջանի պաշտոնական քարոզչության համար «թիրախայիններից» մեկը Լեռնային Ղարաբաղում «սոցիալական ծանր պայմանների եւ հանցավորության բարձր մակարդակի» թեման է: Իսկ այդ երկրի փոխարտգործնախարար Արազ Ազիմովը Արցախի բնակչության թվաքանակը, «կապված վերոհիշյալի հետ» արդեն իսկ «հասցրել է» 35 000-ի: Որ սա հիվանդ ուղեղի զառանցանք է, չարժե նույնիսկ ապացուցել:

Կնախընտրենք այլ ճանապարհ: Մենք հետեւեցինք ադրբեջանական մամուլի հրապարակումներին եւ դիտարկեցինք նոյեմբերի 5-ի օրվա քրեական «քրոնիկոն»-ը: Այդ օրը Սաաթլիի շրջանի Սարիջալու գյուղում 50-ամյա Նազիր Ահմեդովը «մորթել է հարազատ որդուն՝ Լոթման Ահմեդովին»:

Նույն օրը Ապշերոնի շրջանի ոստիկանություն է դիմել Գոբուստանի շրջանի բնակիչ Իֆթիխար Հաջիեւը եւ հայտնել, որ Քյուրդահան ավանում հարազատների հարսանիքի ժամանակ «անհայտ պատճառներով անհետացել է իր կինը՝ 1991 թ. ծնված Քյոնուլ Նովրուզովան»: Ոստիկանությունը կազմակերպել է որոնում, մշակվում են ամենատարբեր, այդ թվում եւ՝ սպանության վարկածը:

Տեղեկացնելով այդ մասին, ադրբեջանական լրատվամիջոցը նաեւ ավելացնում է, որ մեկ շաբաթ առաջ Բաքվի Սաբունչիի շրջանի այսպես կոչված «Լաթիֆ բաղլարի» ավանի բնակիչ Ն. Ի.-ն դիմել է ոստիկանություն եւ հայտարարել, որ, արթնանալով վաղ առավոտյան, անկողնում չի գտել կնոջը, որի հետ ամուսնացել էր ընդամենը մեկ ամիս առաջ: Ոստիկանության որոնումները արդյունք չեն տվել:

Նույն օրվա ամենաասահմռկեցուցիչ դեպքը տեղի է ունեցել Սաբիրաբադի շրջանի Խալֆալի գյուղում. 1957 թ. ծնված, 5 երեխայի հայր Բալամիրզա Նաբաթովը ինքնահրկիզման միջոցով վերջ է տվել կյանքին: Դեպքը կատարվել է «երեխաների աչքի առաջ», ինչպես հաղորդել են Սաբիրաբադի շրջանի դատախազությունից: Ըստ վարկածի, Նաբաթովը «մոլի հարբեցող էր, որ տուն վերադառնալով՝ ոգելից խմիչք է փնտրել եւ չգտնելով՝ վրան բենզին լցրել եւ ինքնահրկիզվել»:

Ի դեպ, ոստիկանության վարկածով որդուն «մորթած» Նազիր Ահմեդովը նույնպես «չարաշահում էր ոգելից խմիչքները», իսկ երբ որդին պահանջել է, որ նա հեռանա տնից, քանի որ «բոլորին խանգարում է», Ահմեդովը «դանակի մի հարվածով սպանել է նրան»: Ամենայն հավանականությամբ՝ հարվածելով որդու կոկորդին:

Այս կարգի հաղորդագրությունները սովորական են դարձել ադրբեջանական մամուլի համար: Վերջին շրջանում ավելի հաճախ գրվում է նաեւ թմրամոլների եւ թմրանյութերի շրջանառության թեմայով: Ընդհուպ՝ որ պաշտոնական մարմինները ստիպված են եղել որոշ մանրամասնություններ ներկայացնել թմրանյութերի տարանցման Իրան-Բաքու-Եվրոպա «երթուղու» մասին:

Ինչպես տեսնում ենք, Ադրբեջանում իրոք սոցիալական եւ այլ դժվարություններ ազդում են քրեածին իրավիճակի վրա, սրում այն: Եվ որքան էլ իշխանությունները ճգնեն, չեն կարող թաքցնել մղձավանջի դրսեւորումները, որոնք, սակայն, մամուլը ներկայացնում է իբրեւ «շեղում օրինաչափությունից» կամ հանցագործներին վերագրում «հոգեկան անհավասարակշռություն» եւ այլն: Դրանից, սակայն, իրական պատկերը չի փոխվում: Ուստի գերադասելի էր, որ Արազ Ազիմովը, փոխանակ կեղծելու Արցախի սոցիալական, տնտեսական, ժողովրդագրական իրողությունները, մտասեւեռվեր սեփական երկրի իրավիճակի վրա: Չէ՞ որ շարքային դիվանագետ չէ, այլ՝ «նորին բռնապետություն» Իլհամ Ալիեւի անձնական ներկայացուցիչ:

ՎԱՀՐԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ

# Չի բացառվում, որ «Զվարթնոց» կենտրոնը կդադարեցնի իր գործունեությունը

## *Պատճառն «Արմավիա»-ի պարտքն է*

«Զվարթնոց» ավիաօդերեւութաբանական կենտրոնը կանգնած է կործանման եզրին», ասում է կենտրոնի փոխտնօրենի, տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար **Պավել Մանուկյանը**: Կենտրոնի պարտքը «Արմենիա միջազգային օդանավակայաններ» ընկերությանը կազմում է 14 միլիոն դրամ, որը չմարելու դեպքում կենտրոնը չի կարողանա ծառայություններ մատուցել, եւ նրան դուրս կհանեն տարածքից: Իրավիճակի միակ մեղավորն, ըստ Պավել Մանուկյանի, «Արմավիա» ՍՊ ընկերությունն է, որը վճարումները չի կատարում: Պարզվում է՝ ազգային փոխադրողը 93 միլիոն դրամ է պարտք, ու թեպետ իրենք բազմիցս փորձեր են ձեռնարկել հարցը կարգավորելու, սակայն «Արմավիա»-ից զանգերին եւ դիմումներին չեն պատասխանում: «Մենք ունենք 17 միլիոն դրամ հարկային պարտավորություն», ասում է ընկերության իրավաբան **Անահիտ Գրիգորյանը**:

«Եթե «Արմավիան» մեր պարտքը չմարի, գործունեությունը կկասեցնենք, ինչի հետեւանքով որեւէ չվերթ չի իրականացվի», ասում է Պավել Մանուկյանը՝ հավելելով, որ յուրաքանչյուր չվերթի համար իրենց մատուցած ծառայությունն արժե 33.000, թեպետ որպես ազգային փոխադրողի «Արմավիա»-ի համար զեղչեր են արել:

Եթե «Արմավիան» իրենց պարտքերը չմարի, նախ կդիմեն նախագահին խնդրին լուծում տալու պահանջով, այնուհետեւ իրավական հարթության վրա կփորձեն խնդիրը լուծել՝ դիմելով դատարան:

«Մենք շատ ուրախ կլինենք, որ նրանք այլեւս մեզ չսպասարկեն, քանի որ դա լրացուցիչ ծախս է», ասաց «Արմավիա»-ի մամուլի խոսնակ **Նանա Ավետիսովան**՝ հավելելով, որ յուրաքանչյուր չվերթից հետո իրենք կենտրոնին 60 դոլար են վճարում, ինչը մեծ գումար է: «Արմավիա»-ից առաջարկում են ուշադրություն դարձնել, թե օրական քանի չվերթ են իրականացնում, եւ խորհուրդ տալիս կենտրոնին, որ վերանայեն իրենց գնային քաղաքականությունն ու ավիաընկերությունները 33.000 դրամը վճարեն ոչ թե յուրաքանչյուր չվերթի, այլ օրվա համար:




Հիշեցնենք, որ «Արմավիա»-ի եւ «Արմենիա միջազգային օդանավակայաններ» ընկերության միջեւ պատերազմն արդեն երկու տարվա պատմություն ունի: «Արմավիա»-ն հսկայական պարտքեր ունի, ինչի հետեւանքով օդանավակայանը պարբերաբար արգելում է ավիաընկերությանը թռիչքներ իրականացնել: Միայն պարտքի որոշակի մասի մարումից հետո օդանավակայանը թույլատրում է ազգային փոխադրողին օգտվել թռիչքուղուց: Այս մենամարտի հետեւանքով տուժում են ուղեւորները, ովքեր ստիպված են ժամերով սպասել, մինչեւ ընկերությունը պարտքերի մի մասը վճարի:

Ի դեպ, երեկ «**Ազգ**»-ի խմբագրություն էին զանգել մի խումբ լիբանանահայեր, ովքեր դժգոհում էին ոչ միայն Երեւան-Բեյրութ տոմսի գնից՝ 850 դոլար, այլեւ այն փաստից, որ վերջին շրջանում չվերթերը 5-6 ժամով ուշանում են, եւ իրենց ոչ միայն բացատրություն չեն տալիս թռիչքների հետաձգման վերաբերյալ, այլեւ չեն ապահովում սննդով կամ ջրով:

Հ. Հ.

# «Արարատբանկի» պարտատոմսերը ցուցակվեցին «Նասդաք ՕԷՄԷՔՍ Արմենիա» ֆոնդային բորսայում

«Արարատբանկը» երեկ հայտարարեց իր հինգերորդ թողարկման պարտատոմսերի առաջին առեւտրային նստաշրջանի բացման մասին: Բանկը, հինգերորդ անգամ անընդմեջ, իրականացրեց պարտատոմսերի թողարկում եւ տեղաբաշխում, որն առաջին հրապարակային առաջարկն էր արտարժութային պարտատոմսերի շուկայում:

«Մենք մարքեթմեյքերի պայմանագիր ենք կնքել «Ռենեսա» ներդրումային ընկերության հետ, եւ պարտատոմսերը մշտապես գնանշվելու են վերջինիս կողմից: Պարտատոմսերն ազատ շրջանառվելու են: Ցանկացած անձ կարող է բորսայի անդամ հանդիսացող ներդրումային ընկերությունների միջոցով երկրորդային շուկայում ձեռք բերել դրանք», ասաց բանկի գործադիր տնօրենի տեղակալ **Դավիթ Հարությունյանը**: Նրա տեղեկացմամբ, հինգերորդ թողարկման պարտատոմսերի տեղաբաշխման արդյունքները ցույց տվեցին, որ մեծ է ներդրողների հետաքրքրությունը: Մասնավորապես՝ պարտատոմսերի պահանջարկը 25 տոկոսով գերազանցել է առաջարկը, իսկ բաժանորդագրությունն ավարտվեց սահմանված ժամկետից 2 օր շուտ: Հիշեցնենք, որ թողարկվել էր 1 մլն դոլար ծավալով 40 հազար պարտատոմս, 9 տոկոս տարեկան եկամտաբերությամբ, 3 տարի մարման ժամկետով: Տեղաբաշխմանը մասնակցել է 166 ներդրող, որոնց գերակշիռ մասը եղել են ֆիզիկական անձինք:

Ա. Մ.

# «Իմ պաշտպանյալը չի արատավորել...»

*1-ին էջից*

Այնուհետեւ դատապաշտպանն ասել է. «Այս գործը որեւէ առնչություն չունի կուսակցությունների հետ: Դա դուրս մի բերեք իրավագիտական ոլորտից: Իմ կարծիքով, Հայկական որեւէ հարց գոյություն չունի Թուրքիայում: Ճիշտ չէ, սպանության միջադեպի պայմանավորումը 1915-ի իրադարձություններով: Թուրքիայում Հայկական հարց չի եղել: Իմ պաշտպանյալը չի արատավորել թուրք զինվորի պատվաբեր համազգեստը: Կարծում եմ, այստեղ դատավարությունը քաղաքականացնելու փորձ է արվում»:

Դատավարությունը հետաձգվել է: Նիստում դատական կոլեգիան մեղավոր է ճանաչել Սեւակ Շահինի սպանության ականատես, նույն զորամասում ծառայող շարքային Հալիլ Էքշիին՝ նախնական ցուցմունքը 6 անգամ փոխելու համար, ինչպես նաեւ մարդասպան Քըվանչի մոր եղբորը:

«Էվրենսելը» այլ մանրամասներ չի հաղորդում: Սակայն թուրքական թերթի հրապարակումը, անկախ մանրամասնություններից, որքան էլ ակամա լինի, երեւան է հանում թուրքահայ զինծառայող Սեւակ Շահինի Մեծ եղեռնը խորհրդանշող ապրիլի 24-ին սպանության եւ 1915-ի ցեղասպանության անմիջական առնչությունը:

Ինչ վերաբերում է արյունարբու թուրք հրոսակի մարդասպան դեմքին, ապա դա էլ բացահայտում է մարդասպանի դատապաշտպան Գյոքի խոսքերը, թե իր պաշտպանյալը չի արատավորել թուրք զինվորի պատվաբեր համազգեստը: Դատապաշտպանները մտավորական են, թե ոչ, չգիտենք, բայց որ Սեւակ Շահինին սպանող Աղաօղլուի դատապաշտպան Գյոքը թուրք է, իսկ թուրքը նույնիսկ 21-րդ դարում հայ սպանելու մոլուցքով տառապող եւ մարդասպանին փառաբանող մարդկային տականք, ակնհայտ է: Կամ դատապաշտպան կոչված այդ արարածը զինվորին չի տարբերում մարդասպանից, կամ էլ, նրա համոզմամբ, զինվորը պետք է մարդասպան լինի, ինչպես նրա պաշտպանյալ Քըվանչ կոչված վարձկան հրոսակը:

# Հայրապետական այց ԱՄՆ Հայոց Արեւելյան թեմ

Նոյեմբերի 6-ին Գարեգին Բ ծայրագույն պատրիարք եւ Ամենայն հայոց կաթողիկոսը հայրապետական այցով մեկնեց Մ. Նահանգների Հայոց Արեւելյան թեմ՝ հրավերով թեմական խորհրդի:

Վեհափառ հայրապետին ուղեկցում է գավազանակիր Տ. Անանիա աբեղա Ծատուրյանը:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԻԱ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
e-mail: azg@azg.am, azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ հեռ. 060 271117
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ հեռ. 060 271113
Հաշվապահութիւն (գովազդ) հեռ. 582960
060 271112
Լրագրողների սենեակ հեռ. 060 271118
Համակարգչ. ծառայութիւն հեռ. 060 271115
***Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն***
հեռ 060 271114, 010 529353
Համակարգչային շարուածքը՝ «Ազգ» թերթի

ԱԶԳ

Անդրադարձ

# Միջավայր, որը կփոխի կույրերի առօրյան

Հայաստանի կույրերի միավորման Սոկրատ Շահնազարյանի անվան մշակույթի տունը չնայած այժմ չի ծավալում իր գործունեությունն այն ակտիվությամբ, ինչպես տարիներ առաջ, այնուամենայնիվ դարձյալ ակտիվ է: Մշակույթի տանը ժամանակին գործող 15-20 խմբակներից մնացել են միայն երեքը` շախմատի, շաշկու եւ ժողովրդական գործիքների խմբակները: Իսկ Կույրերի միավորման ուսումնաարտադրական ձեռնարկությունները թեեւ պահպանվել են, սակայն գործում են իրենց կարողությունների միայն 10 տոկոսի չափով, քանի որ ներկրվող ավելի էժան, սակայն անորակ ապրանքների պատճառով, ուսումնաարտադրական ձեռնարկությունների արտադրանքը մրցունակությանը չի դիմանում:

Հիշելով Մշակույթի տան գործունեության, միավորման անդամների ունեցած հաջողությունների մասին` Մշակույթի տան գործադիր տնօրեն **Յուրի Ավետիսյանը** նշում է, որ իրենց գործունեության սահմանափակման պատճառը ֆինանսական միջոցների սակավությունն է: Ս. Շահնազարյանի անվան մշակույթի տունը հիմա սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն է եւ իր ծախսերը հոգում է ինքնուրույն:

Ներկայումս Կույրերի միավորումն ունի շուրջ 10 հազար անդամ, կան մարդիկ, որոնք չգիտեն այս միավորման մասին, եւ կան այնպիսիները, որոնք գիտեն, բայց, ինչպես ասում է Յուրի Ավետիսյանը, մտածում են` ի՞նչ օգուտ Կույրերի միավորմանը անդամագրվելուց: Օգուտներ իհարկե կան, միայն այն, որ նույն խնդիրն ունեցող մարդիկ դուրս են գալիս տնից, հավաքվում նույն տեղում, շփվում, ընկերանում, ամուսնանում իրար հետ, արդեն իսկ օգտակար է: Մշակույթի տանը բացի իրենց համար զբաղմունք գտնելուց` նրանք կարող են սովորել խմբակներում, շուտով նաեւ կարող են օգտվել համակարգչային սենյակներից եւ այլն:

Համակարգչային սենյակները կբացվեն շուտով, դրանք կունենան տեսողական խնդիրներ ունեցող մարդկանց համար հատուկ ծրագրեր, որոնցից կարող են ազատ օգտվել չտեսնող ու թույլ տեսողություն ունեցողները:

Համակարգչային սենյակները բացվելու են Միջազգային ինտերնետ ընկերությունից ստացած դրամաշնորհի միջոցով: Ինտերնետ ընկերության հայկական մասնաճյուղի փոխնախագահ **Արմեն Նազարյանը** պատմում է, որ ընկերությանն իրենք ներկայացրել են ծրագիր, որն իրականացնելու համար ստացել են դրամաշնորհ: Ներկայումս դրամաշնորհի միջոցով վերանորոգվում են մշակույթի տան այն 3 սենյակները, որոնցում կտեղադրվեն 15 հատուկ համակարգիչներ:

Արմեն Նազարյանը նշում է, որ ընկերության մասնագետները նաեւ կսովորեցնեն տեսողական խնդիրներ ունեցողներին, թե ինչպես օգտվել համակարգիչներից ու ծրագրերից:

Չտեսնող կամ թույլ տեսողություն ունեցողների համար ինտերնետային մի կենտրոն հիմա գործում է Հայփոստի գլխավոր մասնաշենքում, սա թեեւ տեխնիկայով ու համապատասխան հնարավորություններով հագեցված է, սակայն տեղի պատճառով իր գործառույթը չի արդարացնում, քանի որ չտեսնող կամ թույլ տեսողություն ունեցողների համար քաղաքի կենտրոնական այդ վայրը գնալ-գալն անհարմար է, շատերն ինտերնետային կենտրոնի մասին նույնիսկ տեղյակ չեն:

Յուրի Ավետիսյանը նշում է, որ չտեսնողների կամ թույլ տեսողություն ունեցողների երկու խումբ կա` մի խումբն աշխույժ է, նրանք կարողանում են հոգալ իրենց օրվա հոգսերը, սակայն այս խումբը չնչին տոկոս է կազմում: Իսկ մյուս խմբի, այսինքն` չտեսնողների մեծամասնությունը պասիվ է, նույնիսկ կան այնպիսիները, որոնք փակված են տներում ու վախենում են դուրս գալ: Հետեւաբար համակարգիչներից օգտվելու համար Երեւանի կենտրոն այցելելը նրանց համար գրավիչ չէ, իսկ մշակույթի տանը, որտեղ հավաքվում են մարդիկ, որոնք ունեն նույն խնդիրը, համակարգչային սենյակներն իրենց գործառույթը կարդարացնեն: Եվ այստեղ բոլոր ծառայությունները թույլ տեսողություն ունեցողների համար լինելու են անվճար:

Յուրի Ավետիսյանը նշում է, որ բացի համակարգչային սենյակների բացումից` մտադիր են հետագայում Մշակույթի տանը բացել մերսման սենյակներ, որտեղ կաշխատեն կույրերի միավորման անդամները, որոնք տիրապետում են բուժական մերսումների. «Ուզում ենք բացել նաեւ շախմատի ու շաշկու դպրոց, որտեղ կդասավանդեն չտեսնող կամ թույլ տեսողություն ունեցող մեր մարզիչները»: Յուրի Ավետիսյանն ինքն էլ շախմատի մարզիչ է եւ 1988-ին տեսողական խնդիրներ ունեցող շախմատիստների մեջ ճանաչվել է Խորհրդային Միության չեմպիոն:

Յուրի Ավետիսյանն ասում է` եթե լուծվեր իրենց տրանսպորտային խնդիրը եւ Մշակույթի տունն ունենար գոնե 1-2 միկրոավտոբուս կույրերի փոխադրման համար, ապա Մշակույթի տունը կդառնար ավելի ակտիվ:

Սակայն հասարակության վերաբերմունքը կույրերի հանդեպ, ցավոք, անտարբեր է, այնինչ շնորհիվ հոգատար, պատշաճ վերաբերմունքի ու բարյացակամ միջավայրի, չտեսնող մարդիկ նույնպես կարող են վարել ակտիվ կյանք ու իրենց զգալ հասարակության ինքնավստահ ու լիարժեք անդամներ:

Յուրի Ավետիսյանը մեր զրույցի վերջում հավելում է, որ գաղափարները, նախատեսվող ծրագրերը բազմաթիվ են, սակայն ամենամոտ ապագայում սպասվում են միայն համակարգչային սենյակների բացումն ու շնորհանդեսը Համակարգչային ձայնային ուսուցման ծրագրերի ինքնուսույցի:

ԻՆԳԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ԱՐՑԱԽ

# Նախարարության Շուշի տեղափոխմամբ նախ լուծվեց հոգեբանական խնդիր

Վերջերս Արցախի մշակույթի եւ երիտասարդության նախարարությունը Ստեփանակերտից տեղափոխվեց Շուշիի հրաշալի վերակառուցված Մարիամաց օրիորդաց կրթահամալիր, ի՞նչ փոխվեց դրանից, հետաքրքրվեց «**Ազգը**» Արցախի մշակույթի եւ երիտասարդության նախարար **Նարինե Աղաբալյանից**. «Առաջինը լուծվեց շատ կարեւոր հոգեբանական խնդիր, որ Շուշին մեր կարեւոր կենտրոնն է` երբեմնի մշակութային քաղաքը, որ այսօր փորձում ենք վերականգնել: Այս տարիների ընթացքում մեր վերաբերմունքը Շուշին նորից ստանա իր երբեմնի կերպարը` մշակութային, գիտական, կրթական կենտրոնի: Շուշիում այսօր մի քանի մշակութային կառույցներ կան արդեն` կառուցվող, ավարտված: Արդեն մասամբ շահագործման է հանձնվել մշակույթի եւ երիտասարդության կենտրոնը, որտեղ տեղակայված են մեր ժողգործիքների համույթը եւ Խանդամիրյանի անվան դրամատիկական թատրոնը, տարբեր ստեղծագործական խմբեր: Ավարտին է մոտենում արդեն Արցախի կերպարվեստի թանգարան-պատկերասրահի կառուցման աշխատանքը Շուշիում, որի բացումը գալիք տարվա մայիսի 9-ին կլինի: Հարակից տարածքում նաեւ լինելու է մեր քանդակների պուրակը: Նաեւ այսօր բնության թանգարան է կառուցվում: Մի քանի մշակութային կառույցներ միանգամից կշահագործվեն, եւ դա կանդրադառնա քաղաքի կյանքի, ժողովրդագրական վիճակի, բնակչության վիճակի բարելավման ու մթնոլորտի փոփոխության վրա:



չիի հանդեպ համարժեք չէր այն հպարտությանը, որ մենք ապրել ենք Շուշիի ազատագրումով: Շուշին դիտվում էր, գուցե կողմից նույնիսկ, անօթեւան մարդկանց ապաստան-բնակավայր, թեեւ նաեւ շատ լավ մտավորականներ են բնակվում այստեղ: Նախարարության տեղափոխմամբ Շուշի այդ խնդիրը մեկընդմիշտ վերացավ, այսօր Շուշին ոչ միայն ազատագրված, բոլորիս հպարտություն պարգեւած քաղաքն է, այլեւ մեր պետական կառավարման գործառույթների իրականացման սուբյեկտ:

Իհարկե, Շուշիի վերականգնման վերջին տարիների գործընթացը հենց միտված է նրան, որ Շու-

Արդեն իսկ նախարարության աշխատակիցների մեկ չորրորդը Շուշիից է», «**Ազգի**» հետ զրույցում նշեց Արցախի մշակույթի եւ երիտասարդության նախարարը:

Մ. Խ.

# Դատավո՞ր դառնալ, թե՞ հայրենիքը պաշտպանել

*1-ին էջից*

Համաձայն 2013-ի պետական բյուջեում դրված ցուցանիշների, Հայաստանում դատավորների միջին աշխատավարձը... 823 հազար դրամ է: Ոչ ոքի թող չթվա, թե մեր գրածի մեջ ինչ-որ բան սխալ է: Կրկնում ենք` 823 000 դրամ: Սահմանադրական դատարանի դատավորների միջին աշխատավարձը 920 հազար դրամ է: Սա այն պարագայում, որ միջին ամսական աշխատավարձը մեր երկրում, այս տարվա 9 ամիսների ցուցանիշով, 118 հազար դրամ է:

Թե որքանով են դատավորական աշխատավարձերը անարդար, կարելի է եզրակացնել նաեւ դրանք համադրելով, օրինակ` ուսուցիչների 117 հազար դրամ կամ քաղծառայողների 146 հազար դրամ աշխատավարձերի հետ, չխոսելով գիտաշխատողների, բժիշկների ու ուրիշների դարձյալ անհամեմատ ցածր աշխատավարձերի մասին:

Հիմա, դատավորական աշխատավարձերը սահմանող պաշտոնյաները ինչպես կարող են բացատրել, թե ինչո՞վ է դատավորների աշխատանքն ավելի կարեւոր մնացած բոլորից, չխոսելով այն մասին, թե որքանո՞վ են դատավորները բարեխղճորեն կատարում իրենց պարտավորությունները եւ որքա՞ն խորն է թաղված այս ոլորտը կոռուպցիայի մեջ: Ընդ որում, նրանց աշխատավարձերի բարձրացումը բացատրելով իբր թե կոռուպցիայի դեմ պայքարելու հիմնավորմամբ, ոչ ոք չի կարող ասել, թե դրանից հետո կոռուպցիան այս համակարգում նվազել է: Կառավարությունից ոչ ոք չի կարող ասել, թե ինչու, օրինակ, բուհերում հակակոռուպցիոն միջոցառումները սկսվում են եւ բայց չեն ավարտվում աշխատավարձերի բարձրացմամբ, իսկ դատական համակարգում սկսվում եւ ավարտվում են միայն աշխատավարձերի բարձրացմամբ: Ի դեպ, տեղեկացնենք, որ դատավորների աշխատավարձերը կառավարության միջնաժամկետ ծախսային ծրագրով բարձրանալու են 2014-ին` մինչեւ 1 մլն 34 հազար դրամի, 2015-ին` 1 մլն 272 հազար դրամի:

Սա դեռ ամբողջը չէ: Նույն դատավորները կենսաթոշակի անցնելիս ստանում են իրենց աշխատավարձի 55 տոկոսի չափով ամենամսյա հավելավճար: Այսինքն, նրանց թոշակը փաստացի դառնում է 450-500 հազար դրամ: Հիշեցնենք, որ մեր մյուս, շարքային մահկանացուների համար հանրապետությունում միջին կենսաթոշակը 25 հազար դրամ է: Թե որքանով է անբարոյական դատավորների համար մյուսներից 20 անգամ ավելի թոշակ ստանալը, թողնում ենք ընթերցողների դատողությանը: Պարզապես անհասկանալի է, թե նման պարագայում ինչպե՞ս մարդկանց բացատրել, որ, ասենք, արտադրությունում արժեք ստեղծելը կամ մարդուն կրթություն տալը, մարդուն բուժելը, փրկելը արտակարգ իրավիճակում, երկրի անվտանգությունը պաշտպանելը ավելի բարձր ու պետության կողմից գնահատվող աշխատանք են, քան դատավոր լինելը:

Թե որքան անբարոյական է դատավորների նման աշխատավարձը, ցույց տանք այլ օրինակներով: Օրինակ, Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ մարտական գործողությունների, ինչպես նաեւ մարտական հերթապահության եւ հատուկ առաջադրանք կատարելու ժամանակ զոհված զինծառայողի ընտանիքը ստանում է միանվագ 910 հազար դրամ` գրեթե այնքան, ինչքան մեր դատավորների մեկ ամսվա աշխատավարձն է: Այն դեպքում, երբ վերջիններս նստած իրենց տաքուկ աթոռներում ոչ թե արդարադատություն են իրականացնում, այլ շատ հաճախ դատական վճիռներ են վաճառում, իսկ զինծառայողը կյանքն է զոհում հանուն հայրենիքի: Եթե զինծառայողը պարզապես ծառայողական պարտականությունները կատարելիս է զոհվել, ապա նրա ընտանիքն ավելի քիչ միանվագ գումար է ստանում` 455 հազար դրամ, եթե դառնում է 1-ին կարգի հաշմանդամ` դարձյալ 455 հազար դրամ, 2-րդ կարգի հաշմանդամ` 364 հազար դրամ, երրորդ կարգի հաշմանդամ` 273 հազար դրամ: Արդարադատության, ֆինանսների նախարարներից մինչեւ վարչապետ եւ նախագահ` համադրեք, խնդրում ենք, այս թվերը դատավորական ամենամսյա աշխատավարձերի հետ, համադրեք այդ աշխատավարձերը դատական համակարգի կոռուպցիայի հետ եւ եզրակացություններ կատարեք:

Չեմ ցանկանում ընդդիմադիր պատգամավորներին դիմել այս հարցադրումները սրելու առաջարկով, քանի որ վերջերս համոզվեցի, որ դա նրանց այնքան էլ չի հուզում: Երբ այս հարցը բարձրացրեցի վերջերս, հրավիրված լինելով մի հեռուստահաղորդման, «ընդդիմադիր» պատգամավոր Արծվիկ Մինասյանը (ՀՅԴ) եւ «այլընտրանք» պատգամավոր Միքայել Մելքումյանը (ԲՀԿ) փութաջանորեն անհամաձայնություն հայտնեցին ինձ հետ, ճիշտ համարելով դատավորների նման աշխատավարձերի առկայությունը, այն դեպքում, երբ հաղորդմանը հրավիրված կառավարության ներկայացուցիչները նախընտրեցին գոնե ոչինչ չասել: Թերեւս հասկանալի է պատգամավորների նման պահվածքի պատճառը` չէ՞ որ պարբերաբար ներկայացվում է բարձրաստիճան պաշտոնյաների եւ ԱԺ պատգամավորների աշխատավարձերի կտրուկ բարձրացման հարցը եւ ընդգծված բացասական հասարակական կարծիքի պատճառով հետաձգվում: Պատգամավորները, փաստորեն, իրենց աշխատավարձերի ապագա բարձրացումն ունեին իրենց մտքում, դրա համար էլ hակված չեն դատապարտելի բան տեսնելու աշխատավարձերի նման ծայրահեղ անհամաչափությունների եւ անարդարությունների մեջ: Ինչպես նշել էր վերջերս եւս մի «այլընտրանք» պատգամավոր, ներկայիս աշխատավարձը` 300-400 հազար դրամ, չի բավարարում կոստյում գնելու համար: Խեղճ պատգամավորներ եւ երիցս խեղճ դատավորներ: Գուցե բջջային կապի մեր օպերատորներին խնդրենք մի SMS արշավ իրականացնել` «Օգնիր դատավորիդ եւ պատգամավորիդ» կոչով:

# Եկամտային հարկի հաշվարկման մեխանիզմը եւ էլեկտրոնային հաշվետվությունների ներկայացման կարգը

2013 թվականի հունվարի 1-ից Հայաստանի գործատուները եւ վարձու աշխատողները գործ կունենան նոր հարկատեսակի՝ միասնական եկամտային հարկի հետ: Այն իրականում փոխարինելու է ներկայում գործող եկամտահարկին եւ աշխատողի ու գործատուի կողմից վճարվող պարտադիր սոցիալական ապահովության վճարներին: Միասնական եկամտային հարկի ներդրմամբ եւս մեկ փոփոխություն կատարվում է գործատուների կողմից հաշվետվությունների ներկայացման կարգի մեջ: 2013 թվականից գործելու է հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային եղանակը. թղթային հաշվետվություններ հարկայինն այլեւս չի ընդունելու: Թե՛ մեկ, թե՛ մյուս փոփոխությունը ներկայումս երկրում ընթացող կենսաթոշակային բարեփոխումների շղթայի մասն են կազմում: Միասնական եկամտային հարկի ներդրումը եւ հաշվետվությունների ներկայացման մեխանիզմը պարզեցնելը նպատակ ունեն ապահովել այդ բարեփոխումների բարեհաջող գործարկումը:

Եվ քանի որ այս փոփոխությունները օրենքով ուժի մեջ են մտնելու 2 ամիս անց, առավել կարեւոր է հանրապետության գործատուներին եւ հաշվապահներին անհրաժեշտ տեղեկատվություն տրամադրելու խնդիրը: Անհրաժեշտ է, որ 2013 թվականի տարեսկզբին երկրի բոլոր ակտիվ հարկատուները լիովին պատրաստ լինեն նոր համակարգին՝ թե՛ գիտելիքների, եւ թե՛ ռեսուրսների առումով: Այս նպատակով ձեռնարկվել են լայնամասշտաբ ուսուցողական աշխատանքներ հանրապետության գործատուների եւ այն անձանց հետ, ովքեր ստորագրում են իրենց կազմակերպությունների հաշվետվությունները: Նրանց բոլոր մանրամասներով ներկայացվում եւ ուսուցանվում են միասնական եկամտային հարկը, էլեկտրոնային հաշվետվությունների ներկայացման կարգը, տրամադրվում է անհրաժեշտ տեղեկատվություն բոլոր հարակից գործողությունների վերաբերյալ, որոնք պետք է ձեռնարկել փոփոխություններին նախապատրաստվելու համար:

Ի՞նչ է միասնական եկամտային հարկը եւ ի՞նչ փոփոխություններ կլինեն դրա ներդրմամբ պայմանավորված: Առաջին էական փոփոխությունն, այսպիսով, այն է, որ գործող համակարգի եկամտահարկը, ինչպես նաեւ աշխատողի սոցիալական ապահովության վճարը եւ գործատուի կողմից վճարվող սոցիալական ապահովության վճարը, որպես առանձին հաշվարկվող պարտավորություններ, այլեւս չեն լինելու: Վճարվելու է մեկ միասնական եկամտային հարկ, որն ամփոփելու է այս երեքը: Եկամտային հարկի դրույքաչափերն են լինելու՝ 24.4 տոկոս՝ մինչեւ 120 000 դրամ աշխատավարձի դեպքում, 26 տոկոս՝ 120 000 դրամ եւ ավելի աշխատավարձի դեպքում: Որպեսզի աշխատողը չտուժի հարկման նոր դրույքաչափերի կիրառման հետեւանքով, գործատուն պարտավորվում է իր կողմից ներկայում վճարվող սոցիալական ապահովության վճարը ավելացնել աշխատողի պայմանագրային աշխատավարձին եւ եկամտային հարկը հաշվարկել այդ համախառն գումարից: Վարձու աշխատողի մաքուր աշխատավարձը այս փոփոխության արդյունքում չպետք է նվազի:

Միասնական եկամտային հարկի ներդրմամբ պարզեցվում է նաեւ հաշվետվությունների ներկայացման համակարգը, քանի որ գործատուներն այժմ ներկայացնելու են միայն մեկ հաշվետվություն՝ նախկին երկուսի փոխարեն եւ էլեկտրոնային եղանակով: 2013 թվականից հարկային մարմինը չի ընդունելու եկամտային հարկի թղթային հաշվետվություն: Էլեկտրոնային հաշվետվությունները հարկային մարմին են ներկայացվելու ՀՀ ԿԱ ՊԵԿ Հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգում: Այդ հաշվետվությունները ստորագրելու համար լիազորված անձինք պարտավորվում են ձեռք բերել նույնականացման քարտ եւ էլեկտրոնային ստորագրություն:

Գործատուներին այս բոլոր փոփոխություններին, նորամուծություններին, ընթացակարգերին ծանոթացնելու, անհրաժեշտ գիտելիք տրամադրելու նպատակով կազմակերպվում են ուսուցողական ծրագրեր հանրապետության բոլոր մարզերում: Դասընթացների միջոցով գործատուները, ինչպես նաեւ այն անձինք, ովքեր իրենց կազմակերպության անունից ստորագրելու են էլեկտրոնային հաշվետվությունները, ծանոթանում են, թե ինչ հաջորդական քայլեր պետք է ձեռնարկել էլեկտրոնային ստորագրություն ստանալու, էլեկտրոնային հաշվետվության պայմանագիր կնքելու համար: Մանրամասն ներկայացվում է նաեւ էլեկտրոնային հաշվետվությունների համակարգից օգտվելու կարգը:

Էլեկտրոնային ստորագրություն ստանալու համար հարկավոր է նախ եւ առաջ դիմել ՀՀ ոստիկանության տարածքային անձնագրային բաժին, որտեղ ներկայացվում է դիմում նույնականացման քարտ ստանալու վերաբերյալ: Նույն հայտի հիման վրա անձին նույնականացման քարտի հետ տրվում է էլեկտրոնային ստորագրության հավաստագիր: Հաջորդ քայլը նույնականացման քարտով եւ էլեկտրոնային ստորագրության հավաստագրով Պետական եկամուտների կոմիտեի սպասարկման կենտրոններ կամ հարկային տեսչությունների տարածքային բաժիններ ներկայանալն է: Այստեղ անձի հետ կնքվում է էլեկտրոնային հաշվետվություն ներկայացնելու պայմանագիր: Պայմանագրում նշվում են էլեկտրոնային հաշվետվությունների համակարգից օգտվելու օգտանուն եւ գաղտնաբառ, որոնք անհրաժեշտ են համակարգ մուտք գործելու եւ էլեկտրոնային հաշվետվությունները ներկայացնելու համար: Վերջին քայլը էլեկտրոնային ստորագրության ակտիվացումն է, որի նպատակով, ՀՀ ԿԱ ՊԵԿ համակարգում գրանցվելուց հետո, հարկավոր է գրանցվել էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակի /ԷԿԵՆԳ/ առցանց համակարգում: Էլեկտրոնային ստորագրության տարեկան սպասարկման վճարը կազմում է 3000 դրամ: Կառավարության որոշման համաձայն՝ այն անձինք, ովքեր նույնականացման քարտ եւ էլեկտրոնային ստորագրություն ստանալու համար կդիմեն մինչեւ նոյեմբերի 30-ը, նրանց էլեկտրոնային ստորագրության մեկ տարվա սպասարկման վճարը կտրամադրվի պետական բյուջեից:

Նկարագրված փոփոխություններն ու ընթացակարգերը ապահովելու են կենսաթոշակային բարեփոխումների բարեհաջող գործարկումը սկսած 2014 թվականից: Դրանք բոլոր մանրամասներով այժմ ուսուցման ձեւով ներկայացվում են գործատուներին եւ հաշվապահներին: Ոլորտի պատասխանատուները վստահ են, որ ընթացող ուսուցողական աշխատանքները կտան ցանկալի արդյունքը, եւ 2013 թվականին գործատուները լիովին պատրաստ կլինեն համակարգում կատարվող փոփոխություններին:

*ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն*

# Առաջին անգամ Հայաստանում. նորարարական ֆինանսական ծառայություններ ՎիվաՍել-ՄՏՍ-ի դուստր ընկերության՝ ՄոբիԴրամի միջոցով

*ՎիվաՍել-ՄՏՍ-ը հեռահաղորդակցության ԱՌԱՋԻՆ օպերատորն է Հայաստանում, որն առաջարկում է ֆինանսական ծառայություններ բջջայինի միջոցով՝ USSD հրահանգների վրա հիմնված, ինչպես նաեւ առցանց՝ կայքէջի միջոցով*

ՎիվաՍել-ՄՏՍ-ն՝ «ՄՏՍ» ԲԲԸ դուստր ընկերությունը, հայտարարում է ՄոբիԴրամի՝ ՎիվաՍել-ՄՏՍ-ին ամբողջապես պատկանող դուստր ընկերության ծառայությունների պաշտոնական մեկնարկի մասին: Այսօրվա դրությամբ ՄոբիԴրամի 25 մասնաճյուղ է գործում Հայաստանում (18-ը՝ Երեւանում, 7-ը՝ մարզերում): Հետագայում էլեկտրոնային վճարման եւ փոխանցման բազմատեսակ ծառայություններ մատուցող այս նոր ընկերության մասնաճյուղերի թիվը կավելանա Հայաստանի ամբողջ տարածքում:

ՄոբիԴրամը ներկայացնում է հաճախորդների սպասարկման բոլորովին նոր մակարդակ՝ հնարավորություն ընձեռելով Հայաստանի բնակչությանն օգտվելու փոխանցման եւ վճարման ծառայություններից բջջային հեռախոսի՝ USSD հրահանգների միջոցով («*» եւ «#» կոճակների օգնությամբ կատարվող հրահանգներ), ՄոբիԴրամի ինտերնետային կայքէջի միջոցով, կամ՝ այցելելով ՄոբիԴրամի որեւէ մասնաճյուղ:

ՄոբիԴրամի մասնաճյուղերում հնարավոր է կատարել տեղական եւ միջազգային դրամական փոխանցումներ «Contact» համակարգով (շուտով նաեւ «Անելիք» համակարգով), կատարել ամսական վճարումներ կոմունալ (ջուր, գազ, էլեկտրաէներգիա), ինչպես նաեւ բջջային եւ ֆիքսված կապի, ինտերնետ հասանելիության ծառայությունների դիմաց, իրականացնել դրամական փոխանցումներ Հայաստանում գործող բանկեր, այդ թվում՝ հիփոթեքի, մեքենայի, սպառողական եւ այլ վարկերի դիմաց: Հաճախորդները նաեւ կարող են վճարել ճանապարհային ոստիկանության տուգանքները եւ կատարել այլ վճարումներ՝ խնայելով զգալի ժամանակ եւ ջանքեր:

ՄոբիԴրամի շնորհիվ ՎիվաՍել-ՄՏՍ-ը հավելյալ հնարավորություն է ստեղծել Հայաստանի բնակչության համար՝ բջջային հեռախոսը վերածելով էլեկտրոնային ֆինանսական ծառայություններից օգտվելու պարզ գործիքի: Բացի այդ, այժմ ՎիվաՍել-ՄՏՍ-ի մասնաճյուղերում զգալիորեն ընդլայնվել է վճարումների եւ փոխանցումների համար տրամադրվող ծառայությունների ցանկը, ինչը թույլ է տալիս բոլոր անհրաժեշտ վճարումները կատարել մեկ վայրում:

ՎիվաՍել-ՄՏՍ-ը հեռահաղորդակցության առաջին եւ միակ օպերատորն է Հայաստանում, որը մատուցում է նորարարական՝ USSD հրահանգների միջոցով բջջային հեռախոսից, ինչպես նաեւ կայքէջի միջոցով կատարվող առցանց ֆինանսական գործառնությունների ծառայություններ՝ Հայաստանի բնակչությանը հնարավորություն տալով փոխանցումներ կատարել առավելագույնս արագ, հեշտ եւ հարմարավետ ճանապարհով: Ծառայություններից կարելի է օգտվել բջջային հեռախոսի USSD հրահանգների միջոցով (հասանելի է միայն ՎիվաՍել-ՄՏՍ-ի բաժանորդներին), եւ համացանցում՝ այցելելով www.mts.am/mobidram կամ www.mobidram.am (հասանելի է Հայաստանի ամբողջ բնակչությանը): Ծառայությունների ցանկը ներառում է էլեկտրոնային հաշվից մեկ այլ էլեկտրոնային հաշվի ակնթարթային փոխանցում, էլեկտրոնային հաշվից բանկային հաշվի փոխանցում, գումարի կանխիկացում, ամսական վճարումներ կոմունալ՝ ջրի, գազի, էլեկտրաէներգիայի, ինչպես նաեւ բջջային ու ֆիքսված կապի, եւ ինտերնետ հասանելիության ծառայությունների դիմաց:

Հատկանշական է, որ ՄոբիԴրամի միջոցով USSD հրահանգների օգնությամբ ֆինանսական գործառնություններ կարելի է կատարել ցանկացած մոդելի բջջային հեռախոսով: Այսինքն՝ ՄոբիԴրամի միջոցով գործարք կատարելու համար անհրաժեշտ չէ ունենալ սմարթֆոն կամ օգտվել ինտերնետային հասանելիության ծառայությունից: ՄոբիԴրամի ծառայություններից կարելի է օգտվել առանց որեւէ հատուկ ծրագիր ներբեռնելու:

«ՄոբիԴրամը հնարավորություն է ընձեռում հոգալու մեր հաճախորդների կարիքները՝ առաջարկելով հեշտ եւ արագ էլեկտրոնային վճարումների եւ ֆինանսական գործարքների ծառայություններ՝ գումարների կառավարման առավել արդյունավետ տարբերակով: ՄոբիԴրամի միջոցով սովորական բջջային հեռախոսը վերածվում է վճարումներ կատարելու հարմարավետ գործիքի», նշել է ՎիվաՍել-ՄՏՍ-ի գլխավոր տնօրեն **Ռալֆ Յիրիկյանը**: «Որպես հեռահաղորդակցության առաջին օպերատոր, որն առաջարկում է էլեկտրոնային ֆինանսական համապարփակ ծառայություններ USSD հրահանգների միջոցով, ՎիվաՍել-ՄՏՍ-ն, իհարկե, առաջնորդվում է առավել նորարարական, արագ եւ արդյունավետ ֆինանսական վճարային ծառայությունների հանդեպ աճող պահանջարկով: Մյուս կողմից՝ ՄոբիԴրամը ստեղծելու գաղափարը համաշխարհային միտումների արտացոլումն է՝ ֆինանսական վճարային համակարգերի ինտեգրումը էլեկտրոնային դրամական համակարգերում: Ամենակարեւորը, էլեկտրոնային հաշվի ստեղծման եւ կառավարման՝ ՄոբիԴրամի ընձեռած հնարավորությունը իդեալական ֆինանսական ծառայություն է այն մարդկանց համար, ովքեր չունեն բանկային հաշիվ կամ ցանկանում են կատարել առցանց փոխանցումներ առավել հարմարավետ ճանապարհով: Բացի այդ, ՄոբիԴրամը լուրջ խթան կհանդիսանա Հայաստանում էլեկտրոնային կոմերցիայի ոլորտի զարգացման համար», ավելացրել է Ռալֆ Յիրիկյանը:

### ՄոբիԴրամի մասին

ՄոբիԴրամը ՎիվաՍել-ՄՏՍ-ին (Կ-Տելեկոմ ՓԲԸ) ամբողջությամբ պատկանող ֆինանսական դուստր ընկերություն է՝ ստեղծված է 2011 թ. օգոստոսին, եւ մատուցում է նորարարական բջջային եւ ինտերնետ ֆինանսական ծառայություններ: ՄոբիԴրամը ձգտում է էլեկտրոնային վճարումների հայաստանյան շուկայում ներկայացնել տեխնոլոգիական վերջին զարգացումները՝ ուշադրության կենտրոնում պահելով իր հաճախորդների գոհունակությունը: 2011թ. հոկտեմբերին Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի կողմից ՄոբիԴրամը ստացել է դրամական փոխանցումներ իրականացնելու լիցենզիա: Ընկերությունը սկսել է գործունեությունը 2012թ. հունվարին եւ ունի մասնաճյուղերի շարունակաբար աճող ցանց ողջ Հայաստանում: 2012 թ. օգոստոսի 21-ին Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի կողմից ՄոբիԴրամը ստացել է էլեկտրոնային փող թողարկելու թույլտվություն:

# «Քրդերը 1915-ի հայերը չեն, որ կոտորեք»

## *Հայտարարել է քուրդ պատգամավորը՝ նախազգուշացնելով Էրդողանի կառավարությանը*

Թուրքիայի 66 կալանավայրերում շուրջ 680 կալանավոր հացադուլ են հայտարարել, եւ այս հացադուլը թեւակոխել է 55-րդ օրը: Հացադուլավորները, կալանված լինելով PKK-ի եւ քրդական այս կազմակերպության քաղաքային կառույցը համարվող KCK-ի գործով, պահանջում են պայմանների բարելավում, մայրենի լեզվով կրթության իրավունք եւ դատապաշտպանների հետ Աբդուլլահ Օջալանին հանդիպման հնարավորություն:

Թեեւ ընդդիմադիր Ժողովրդահանրապետական կուսակցությունը, ինչպես նաեւ քաղաքացիական հասարակության տարբեր կազմակերպություններ կոչ են անում Էրդողանի կառավարությանը ընդառաջել հացադուլավորներին, բայց ապարդյուն: Այդ ընթացքում «Խաղաղություն եւ ժողովրդավարություն» կուսակցությունը, որի պատգամավորները պատրաստվում էին հացադուլի նստել հենց Թուրքիայի ազգային մեծ ժողովում, ցույցերով, երթերով փորձում է հակազդել կառավարությանը:

Այդպիսի մի երթ նախորդ օրը կազմակերպվել է Իզմիրում: Երթը սկսվել է «Խաղաղություն եւ ժողովրդավարություն» կուսակցության քաղաքային վարչության շենքի մոտ, որին մասնակցել է շուրջ 1500 մարդ, մասնակիցների թվում է եղել այս կուսակցության պատգամավոր Սըրրը Սաքըքը: Երբ ավարտվել է հանրահավաքը, որտեղ մասնակիցները կարգախոսներով համերաշխություն են հայտնել PKK-ի առաջնորդ Օջալանին ու հացադուլավորներին:

Հանրահավաքի ընթացքում ներկաներին է դիմել նաեւ քուրդ քաղաքական գործիչ, պատգամավոր Սըրրը Սաքըքը, որը երեկվա համարում turktime.com-ը ներկայացրել է «Աներեւակայելի սպառնալիք» վերնագրով:

Ահա թե, ըստ նշված աղբյուրի, ինչ է ասել նա. «Այս կալանավորները 54 օր շարունակ հացադուլ են անում, որ թուրք եւ քուրդ երիտասարդները չմեռնեն այլեւս: Նրանք կալանավայրում պայմանների բարելավման պահանջ իրականում չունեն: Նրանք պահանջում եւ անձնազոհության են գնում երկրում արյունահեղությունը դադարեցնելու համար:

Փոխանակ դրան ուշադրություն դարձնելու, իշխանությունները հացադուլավորներին մեղադրում են «շոու» անելու մեջ: Հիրավի, քուրդ գերիները «շոու» են անում, բայց մահվան հետ, նրանք երբեք ծնկի չեն գալիս: Իսկ դուք երկրպագում եք մահին: 1984-ին հացադուլավորների մասին նույնն էին ասում, սակայն մեռավ 4 մարդ, 1996-ին՝ 16, 2001-ին՝ 112: Ինչպես երեւում է թուրքական պետության մեջ չի փոխվում ավանդույթը, որովհետեւ 2012-ին վարչապետ Էրդողանը նույն կերպ է վարվում:

Ավելին, նա ակնարկում է, թե կվերականգնվի մահապատիժը: Թուրքիայում հանրապետական կարգերի հաստատումից մինչեւ մեր օրերը քրդերի պապերը միշտ կախաղան են բարձրացվել: Շեյխ Սահիդը (1925-ի ապստամբության ղեկավար) Օջալանի նախնին է, հետեւաբար մեր նախնին: Սեիդ Ռիզան (1938-ի Դերսիմի ապստամբության ղեկավար) Օջալանի նախնին է, նաեւ՝ մերը: Նույնը պետք է ասել Սահիդի Նուրսիի մասին: Դուք կախաղան եք բարձրացրել հազարավոր քրդերի: Նրանք մեր նախնիներն էին, եւ այդ քրդերը գլուխ չխոնարհեցին: Այսօր առավել եւս չեն խոնարհի: Հետեւաբար քրդերին մահապատժով սպառնալն առնվազն անօգուտ զբաղմունք է»:

Ելույթում Սըրրը Սաքըքը անդրադարձել է նաեւ Թուրքիայում ծայր առած եւ թուրք-քուրդ բախումների միտում ունեցող հուզումներին, մատնանշելով. «Դուք խանգարում եք մեր համատեղ գոյակցությունը, սաստում եք մեր ժողովրդին: Բուրսայում ֆաշիստական շրջանակները, հենվելով անվտանգության ուժերից ստացած աջակցության վրա, ներխուժում են քրդական թաղամասեր եւ գետնին են հավասարեցնում տները: Սա է երկրում իշխող «Արդարություն եւ բարգավաճում» կուսակցության արդարությունը: Սակայն ասեմ՝ խելքներդ հավաքեք գլուխներդ: Քրդերը 1915-ի հայերը չեն, որ կոտորեք: Ոչ էլ 1955-ի սեպտեմբերի 6-7-ի հույները կամ հրեաները (նկատի ունի Ստամբուլում իրականացված կոտորածը): Մենք երբեւէ բռնության քաղաքականություն չենք իրականացրել: Սակայն իմացեք, եթե հացադուլը մահով ավարտվի, ապա փողոցները կքեծանան: Մարդիկ (քուրդ) դա չեն հանդուրժի, ուստի եւ կոչ ենք անում ձեզ զգոն լինել»:

Հ. ՉԱՔՐՅԱՆ

# Պահանջում են պարզաբանել Ռոմնիի որդու Մոսկվա կատարած այցը

**Պետդումայի պատգամավոր Միխայիլ Սերդյուկը դատախազությանը խնդրել է պարզել ԱՄՆ նախագահության հանրապետական թեկնածու Միթ Ռոմնիի որդու Ռուսաստան կատարած այցելության իրական պատճառները: «Իզվեստիա» թերթը գրում է, որ «Արդար Ռուսաստան» կուսակցության պատգամավորը համապատասխան հարցապնդում է արել գլխավոր դատախազ Յուրի Չայկային: Սերդյուկը կարծում է, որ Մեթ Ռոմնին փորձել է հոր օգտին շփումներ հաստատել ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինի հետ:**

**Ավելի վաղ հաղորդվել էր, որ անցյալ շաբաթ Մեթ Ռոմնին Մոսկվա է այցելել իր ֆիրմայի համար ներդնողներ գտնելու նպատակով: Սակայն Սերդյուկը համոզված է, որ Ռոմնի կրտսերը, որը մասնակցում էր հոր նախագահական ընտրարշավին, կարող է լինել «թեկնածուի վստահյալ անձը», իսկ նման դեպքում Ռուսաստանում նրա ասածները պետք է գնահատվեն որպես հոր պաշտոնական դիրքորոշում:**

**Պատգամավորը դատախազությանը խնդրում է պարզել Մեթ Ռոմնիի կարգավիճակը: Բացի դրանից, դատախազությունը պարտավոր է ստուգել ԶԼՄ-ների այն տվյալները, թե Ռոմնի կրտսերը իբր հանդիպում է ունեցել նախագահ Պուտինի մերձավորներից մեկի հետ:**



**Սերդյուկը հիշեցրել է հանրապետականների թեկնածուի ամբողջ ընտրարշավի ժամանակ Ռուսաստանի հասցեին նրա արած քննադատությունները: Մասնավորապես Ռոմնին Ռուսաստանը համարում է «թիվ 1 աշխարհաքաղաքական թշնամի»: «Ռուսատյաց թեկնածուն ընտրարշավը կառուցել էր ընդդեմ Ռուսաստանի եւ այդ այցելությունից հետո նրա ամբողջ նախընտրական քարոզչությունը դառնում է անհեթեթություն, իսկ նրա վստահյալ անձինք հասարակ ամերիկացիների աչքին դառնում են ՊԱԿ-ի գործակալներ», հայտարարել է պատգամավորը: Նա կարծում է, որ հանրապետականը «հասկացել է, որ չափն անցել է, եւ փորձում է իրավիճակը շտկել դիվանագիտական մակարդակով»:**

**Սերդյուկը վստահ է, որ նոյեմբերի 6-ի ընտրություններում Ռոմնիի հաղթանակի դեպքում չի հաջողվի լռության մատնել նրա որդու մոսկովյան այցելությունը: Ռոմնին ստիպված կլինի կամ հրաժարվել նման որդուց, կամ էլ հստակորեն պարզաբանել Ռուսաստանի նկատմամբ իր դիրքորոշումը:**

**Մասաչուսեթսի նախկին նահանգապետ Միթ Ռոմնին իր կարիերան սկսել է որպես ձեռնարկատեր եւ այդ ասպարեզում հասել զգալի հաջողությունների: 2012-ի սեպտեմբերին պարզվեց, որ չնայած Մոսկվային հասցեագրած քննադատությանը, նա միջոցներ է ներդրել ռուսական «Գազպրոմ» եւ «Յանդեքս» ընկերություններում: Ի դեպ, երկու դեպքում էլ կորուստներ է կրել: «Իզվեստիան» բացահայտել է, որ Ռուսաստանի հետ հարաբերություններ ունի Ռոմնիի հետ կապված Bain&Company ֆիրման: Պարզվում է, որ Անատոլի Չուբայսի «Ռոսնանո» կորպորացիան հենց այդ խորհրդատվական ընկերությանն է պատվիրել իր զարգացման ռազմավարությունը:**

ԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ

# Ի հակակշիռ Ուզբեկստանի՝ Ռուսաստանը կօգնի Ղրղզստանին եւ Տաջիկստանին

## *Նպատակը Միջին Ասիայից ԱՄՆ-ին դուրս մղելն է*



Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպությունից (ՀԱՊԿ) դուրս գալու եւ ԱՄՆ-ի հետ հարաբերությունները կարգավորելու Ուզբեկստանի քայլերին ի պատասխան՝ Ռուսաստանը մտադիր է սերտացնել հարաբերությունները այդ երկրի մերձավոր հարեւանների հետ: Բարեկամությունը գնահատվում է ավելի քան 1 մլրդ դոլար, որը կհատկացվի ղրղզական եւ տաջիկական բանակների արդիականացմանը: Փորձագետները դժվարանում են կանխատեսել նման շռայլ օգնության հետեւանքները:

Մոսկվան Բիշքեկին խոստացել է 1,1 մլրդ դոլարի ռազմական օգնություն: Ղրղզստանը կստանա հրազեն, նոր զրահամեքենաներ, հետախուզական-դեսքային մեքենաներ, ուղղաթիռներ, դաշտային հոսպիտալներ, շարժական ականետներ, թեթեւ մոտորային տեխնիկա եւ արբանյակային սարքեր, տեղեկացնում է «Կոմերսանտ» թերթը:

Առայժմ հայտնի պայմանավորվածությունների համաձայն, խոսքը նաեւ ռուսաստանյան բուհերում ղրղզ զինվորականների պատրաստումն ընդլայնելու մասին է: Որոշ տեղեկությունների համաձայն, ռուսական զենքի առաջին խմբաքանակները Ղրղզստան կառաքվեն 2013-ի ամռանը:

Ինչ վերաբերում է Տաջիկստանին, այստեղ ռազմական օգնության ծավալը բավական համեստ է՝ ընդամենը 200 մլն դոլար: Փողերը կհատկացվեն հակաօդային պաշտպանության արդիականացմանը եւ ռազմական տեխնիկայի նորոգմանը: Նաեւ պայմանավորվածություն կա ռուսական նավթամթերքների մատակարարման ոլորտում Դուշանբեին արտոնություններ տրամադրելու վերաբերյալ: Ռուսաստանը տուրք չի գանձի այն գումարից, որը մոտավորապես հավասար է 201-րդ ռազմակայանի վարձակալման ժամկետը երկարաձգելու համար ղրղզների պահանջած գումարին. դա տարեկան մոտ 200 մլն դոլար է:

Մոսկվան մտածում է նաեւ Տաջիկստանի հիդրոէլեկտրակայաններում ներդրումներ կատարելու մասին: Տաջիկստանին տնտեսական բարիքներ է խոստանում նաեւ Մաքսային միության անդամ դառնալու հեռանկարը: Միությունում արդեն գրկաբաց սպասում են Ղրղզստանին:

Ինչպես նշում են «Կոմերսանտի» աղբյուրները, այս բոլոր միջոցառումներն ուղղված են ՀԱՊԿ-ի ներսում կապերի ամրապնդմանը, նկատի ունենալով այն վտանգները, որոնք տարածաշրջանում կարող են ծագել 2014-ին Աֆղանստանից ՆԱՏՕ-ի զորքերի դուրսբերումից հետո: Թերթի զրուցակիցները ընդմին խոստովանում են, որ Ռուսաստանն այդ ձեւով նաեւ փորձում է կանխել Միջին Ասիայում ԱՄՆ-ի դիրքերի հետագա ամրապնդումը:

# Սիրիացի ապստամբների գլխավոր վարկատուն Լիբիան է

## *Սիրիացի 7 գեներալ փախել է Թուրքիա*

Լոնդոնի «Ֆայնենշլ թայմս» թերթը տեղեկացնում է, որ սիրիական ընդդիմության գլխավոր վարկատուն Լիբիայի կառավարությունն է: Ապստամբների «Սիրիական ազգային խորհուրդը» Լիբիայից ստացել է 20,3 մլն դոլար:

Ապստամբների ֆինանսավորման գծով երկրորդ տեղում Քաթարն է՝ 15 մլն դոլար, երրորդ տեղում՝ ԱՄԷ-ն՝ 5 մլն:

Ներկայումս Լիբիան Սիրիա է ուղարկում նաեւ Քադդաֆիի վարչակարգի դեմ կռված մարտիկների, ընդգծում է բրիտանական թերթը:

Անադոլու գործակալությունը հաղորդում է, որ նոյեմբերի 6-ին սիրիացի 7 գեներալ փախել է Թուրքիա: Գեներալները վայր են դրել զենքը եւ ապաստան խնդրել: Նրանց հետ եղել են սիրիացի նաեւ ուրիշ զինծառայողներ: Թուրքերը նրանց բոլորին ձեւակերպել են որպես փախստականներ եւ ուղարկել են «Ալայդըն» ճամբար:

Կառավարական զորքերը լքած սիրիացի գեներալների ընդհանուր թիվը 42 է: Մի քանիսն էլ սպանվել են ապստամբների դեմ կռվելիս:

ԱԶԳ

# Մշակույթ

## Ռուբեն Մանգասարյանի «Անկախության ճանապարհին» լուսանկարների ցուցահանդեսը Շուշիում

Հոկտեմբերի 25-ին Շուշիի Մշակույթի տանը բացվեց հայտնի ֆոտոլրագրող Ռուբեն Մանգասարյանի «Անկախության ճանապարհին» խորագրով լուսանկարների ցուցահանդեսը, որը ներկայացնում է անկախության համար պայքարն ու նոր սերնդին հաղորդակից դարձնում անկախության ձեռքբերման դժվարին ուղին:

Ցուցահանդեսը նվիրված էր Շուշիի ազատագրման եւ Հայոց բանակի ստեղծման 20-ամյակին: Այն կազմակերպել էր «Շուշվա» զբոսաշրջային ընկերությունը՝ ԼՂՀ մշակույթի եւ երիտասարդության հարցերի նախարարության աջակցությամբ: Այստեղ ներկայացված էր հեղինակի ղարաբաղյան պատերազմի ժամանակ արված լավագույն լուսանկարների մի մասը: Ցուցահանդեսին ներկա էին ԼՂՀ Մշակույթի եւ երիտասարդության հարցերի նախարար Նարինե Աղաբալյանը, ԼՂՀ կառավարության աշխատակազմի ղեկավար Լեւոն Գրիգորյանը, ԼՂՀ Զբոսաշրջության վարչության պետ Սերգեյ Շահվերդյանը, բազմաթիվ հյուրեր: Ռուբեն Մանգասարյանի գործունեությունը ներկայացրեց հեղինակի եղբայրը՝ Տիգրան Մանգասարյանը: Ինչպես նա նշեց՝ այս ցուցահանդեսը Ռուբենի մահից հետո վեցերորդն է: Եվ պատահական չէ, որ լուսանկարների ցուցադրման համար ընտրվել է հենց Շուշին: Այս հինավուրց քաղաքի պատմությունն ու ազատագրումը մեր նորագույն պատմության լուսավոր էջերի մաս են կազմում: Ռուբեն Մանգասարյանը ծնվել է 1960թ. Երեւանում: Ռուբեն Մանգասարյանի ստեղծագործական աշխատանքի ու կարիերայի ամենաբեղուն տարիքը համընկավ 80-ականներին Հայաստանում սկիզբ առած անկախության շարժման հետ: Հենց անկախ պետականության ձեռքբերման երկար ու դժվարին ճանապարհի ցնցող ու աղետալի հետեւանքներ ունեցող իրադարձությունները՝ Արցախյան շարժումն ու ավերիչ երկրաշարժը, ղարաբաղյան պատերազմն ու էներգետիկ ճգնաժամը դարձան նրա ստեղծագործությունների թեմատիկ հենքը: Այդ ընթացքում Ռուբենին հաջողվեց կազմել հայ ժողովրդի անցած տառապալից ուղու բացառիկ մի արխիվ, որն այսօր ավելի խոսուն ու ավելի փաստացի է, քան բազմաթիվ հոդվածներն ու գրքերը:

Տիգրան Մանգասարյանի պատմածից մենք տեղեկանում ենք, որ պատերազմի տարիներին Ռուբենը չորս տարի գտնվել է Արցախում. «Նա այդ տարիներին սկսեց ոչ թե ստեղծագործել, այլ բառացիորեն ապրել Ղարաբաղում եւ այդ լուսանկարներով»: Ռուբենին հաջողվեց այն, ինչը գրեթե ոչ մի լրագրողի չէր հաջողվել: Շատ տեղերում նա զինվորների հետ ռազմաճակատի հենց առաջին գծում էր: Ու նա աշխատում էր այդպիսի պայմաններում: Տիգրան Մանգասարյանի վկայմամբ, այդ չորս տարիների ընթացքում Ռուբենն ընդամենը մի քանի անգամ էր եղել Երեւանում, այն էլ միայն ժապավենները երեւակելու պատրվակով: Ահա թե ինչու Ռուբեն Մանգասարյանի լուսանկարներում Արցախյան պատերազմից պահպանվում է շուրջ 35 000 կադր արխիվ: Այդ լուսանկարների մեջ Արցախյան պատերազմի ընթացքն է, հայ զինվորի պայքարը, մարդկանց պաշտպանությունն , ինչո՞ւ չէ, նաեւ հաղթական պահերը:



Ռուբենը նկարում էր տարբեր թեմաներով, որոնք պատերազմի թեմայի մեջ դառնում էին առանձին թեմաներ:

Ռուբեն Մանգասարյանի ստեղծագործական առաջին հիմնական շրջանը՝ 1988-1994 թվականներն էին, երբ նա իսկապես կայացավ որպես լրագրող: Նա այդ տարիներին արդեն փորձառություն ուներ եւ իր գործին ցուցաբերեց պրոֆեսիոնալ մոտեցում, դարձավ նրա նվիրյալը: Գիշեր-ցերեկ նա նկարում էր եւ այդ տքնաջան աշխատանքի արդյունքում Ռուբենից ժառանգություն մնաց մի իսկայական արխիվ՝ տասնյակ հազարանոց կադրերով:

Հետո նրա համար սկսվեց ստեղծագործական մեկ այլ շրջան, արդեն խաղաղ պայմաններում ստեղծվեցին ֆոտոլրագրային բազմաթիվ նախաձեռնություններ եւ նախագծեր, իսկ այդ շրջանի լուսանկարները ներկայացնում էին ազգային փոքրամասնությունների խնդիրները, Մերձավոր Արեւելքն ու Միջին Ասիան, հայ-թուրքական հարաբերություններն ու Հայաստանի սոցիալական վիճակը:

Ռուբեն Մանգասարյանը կապեր ուներ աշխարհի տարբեր երկրների ֆոտոլրագրողների հետ եւ համագործակցում էր տարբեր գործակալությունների հետ, ինչպիսիք են «AP», «Ֆրանս-պրես», «Ռոյթերս», «ԻՏԱՌ-ՏԱՍՍ», «Ռիա-Նովոստի» եւ այլն: Նրա լուսանկարչական ռեպորտաժները տպագրվել են «Թայմս», «Բոստոն Գլոբ», «Ֆիգարո», «Ձեն Կորեա», «Նյու Յորք Թայմս», «Ֆոկուս» եւ մի շարք այլ պարբերականներում :

Լինելով պրոֆեսիոնալ ֆոտոլրագրող, Մանգասարյանը հիմնադրել էր նաեւ «Պատկեր» ստուդիան եւ նախաձեռնել Կովկասի ինստիտուտում ֆոտոլրագրության դասընթացներ, որտեղ ուսում ստացան լուսանկարչությամբ հետաքրքրվողները: Իր ուսանողների համար նա անում էր ամեն ինչ: Տարբեր ծրագրերի շրջանակներում նա ուսանողներին իր հետ տանում էր տարբեր երկրներ, ճիշտ ուղղություն ցույց տալիս, բացի զուտ տեխնիկական հարցերից, ուղղորդում էր նաեւ մարդկային առումով:

Ռուբեն Մանգասարյանին հաջողվել էր նաեւ ձեռք բերել ամերիկյան նշանավոր «National Geographic Traveler» հանդեսի հայաստանյան տարբերակը հրատարակելու իրավունքը: Ռուբենը հրատարակեց նկարազարդ հանդեսի 2 համար, որոնք շատ դուր եկան ամերիկացիներին եւ հայ ընթերցողին: Պատրաստվում էր նաեւ 3-րդ համարը՝ նվիրված Հայաստան-Թուրքիա սահմանամերձ շրջաններին, երբ վաղաժամ մահը ընդհատեց նրա բոլոր ծրագրերը:

Աշխարհի խոշոր լրատվական գործակալությունների եւ պարբերականների կողմից սիրված ու ընդունված, բազմաթիվ մրցանակների արժանացած լուսանկարիչը կյանքից հեռացավ 2009 թվականին՝ 49 տարեկան հասակում, բայց հասցրեց հավերժացնել Հայաստանն ու Արցախը:

Ռուբեն Մանգասարյանի հիշատակը վառ են պահում նրա բազմաթիվ աշակերտները: Միավորվելով եւ ստեղծելով «Ռուբեն Մանգասարյան մեմորիալ հիմնադրամը», նրանք փորձում են շարունակել լուսանկարչի աշխատանքները՝ զբաղվելով Ռուբեն Մանգասարյանի նկարների իսկայական արխիվի թվայնացմամբ ու պահպանմամբ, կազմակերպելով ցուցահանդեսներ, ներկայացնելով նրա իսկայածավալ աշխատանքները:

**Լ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

---

75-ԱՄՅԱԿ

## Հրաչյա Մաթեւոսյանին

### *«...Ով հայտնագործողի հրճվանքով կերտում է ժամանակակցի կերպարը»*



Ժամանակակից հայ գրականության ասպարեզում ունեցած նշանակալի ավանդի, ինչպես նաեւ ծննդյան 75-ամյակի առթիվ արձակագիր, հրապարակախոս **Հրաչյա Մաթեւոսյանը** (Հրաչօ) պարգեւատրվել է ՀՀ մշակույթի նախարարության բարձրագույն պարգեւով՝ Ոսկե մեդալով: Պարգեւը Հայաստանի գրողների միության մեծ դահլիճում կայացած հանդիսավոր արարողության ժամանակ հասցեատիրոջը հանձնեց ՀՀ մշակույթի նախարարության ժամանակակից արվեստի վարչության պետ Սեյրանուհի Գեղամյանը, միաժամանակ հոբելյարին փոխանցելով անձամբ նախարար Հասմիկ Պողոսյանի եւ նախարարության աշխատակազմի շնորհավորանքները:

Ներկայացնելով մանուկների եւ մեծերի համար գրողի ստեղծած գրականությունը, ՀԳՄ նախագահ **Լեւոն Անանյանը** ասաց, որ Հրաչյա Մաթեւոսյանի ներկայությունը մեր կյանքում, մեր գրականության մեջ մխրճված է մեր մշակույթի պատմության, ազգային ավանդույթի խորքերում, ու թվում է, թե նա առնվազն գալիս է Րաֆֆու ժամանակներից, Արծրունու «Մշակից»...

Եվ՝ հընթացս այն զգացողությունը, որ Հրաչյա Մաթեւոսյանը 21-րդ դարի մեր արդիական ու ամենաբոցաշունչ մտավորականներից է, ով իր տողի ու գրի միջով է անցկացնում հայ հասարակական-մշակութային իրականության մակընթացություններն ու տեղատվությունները: Նա պարզապես չի կարող անտարբեր ապրել, երբ շուրջն օր-օրի ազգային սրբությունները գահընկեց են լինում, բարոյական արժեքները՝ գլխիվայր շրջվում, երբ անհետանում է հայի ու հայրենասերի զտարյուն տեսակը, որի վերջին մոհիկանների բնակավայրը դառնում է սոսկ իր եւ իր համախոհ գրչակիցների գրականությունը:

Նրա մարդկային ու ստեղծագործական ձույլ, անտրոհելի նկարագիրը խարսխվում է երկու կարեւոր առանցքի վրա՝ կտրական ոչ ասելու արիությունը մեր կյանքում տեղ գտած հոռի եւ ապազգային երեւույթներին, այո ասելու լավատեսությանը մեր նորանկախ երկրի կայացման քայլերին:

Այսպիսին է Հրաչիկը. նա կարող է մեռնել ամեն հասվող ծառի մեջ եւ վերածնվել ամեն դողդոջ ծիլի հետ:

Ու թեեւ նրա գրչին հասու են բացառապես բոլոր կենսական թեմաներն ու գրական ժանրերը, առաջնություն են կազմում երկու բնորոշ նախասիրությունները՝ մարդու էկոլոգիան եւ բնության էկոլոգիան:

Մեր դժվար ու հակասական ժամանակներում Հրաչյա Մաթեւոսյանն այն բացառիկ գրող-հրապարակախոսներից է, ով հայտնագործողի հրճվանքով կերտում է ժամանակակցի կերպարը, չհանդուրժելով, որ մարդկային թանկ ու փայփայելի որակները տրոհվեն-տարրալուծվեն այսպես կոչված նոր քաղաքակրթության սադրած հորձանքի մեջ:

Նրա բոլոր պատմվածքների ու ակնարկների էջերից նախ եւ առաջ հառնում է հեղինակի կերպարը՝ Լոռու մոգական աշխարհի բացիրտ մեղմությունը՝ ներհյուսած Ահնիձորի քարակոփ սարերի կարծրության հետ:

Եվ վերջապես՝ նրա ճակատագրի երկփեղկվածությունը. լինել մաթեւոսյանական գրական ընտանիքի միջնեկը եւ մեր արձակի դասականի փառքի ճաճանչների տակ հաստատել սեփական ձեռագիրը: Եվ այժմ, երբ, ավա՜ղ, Հրանտը չկա, ապրել նրա մշտագո պատասխանատվությամբ:

Ծանր խաչ, պատվավոր առաքելություն, որ ահա 75 տարի անտրտունջ ինքնայրումով կրում է Հրաչյա Մաթեւոսյանը, Հրաչօն, մեր Հրաչիկը:

Հոբելյանի առթիվ ողջույններ հղեցին գրականության եւ արվեստի, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները, լրագրողներ, գրողի մտերիմները, ընթերցողները:

Հնչեցին երաժշտություն եւ պոեզիա ի պատիվ հոբելյարի: Ասմունքող Գայանե Սամվելյանը, ով վարում էր հանդիսությունը, ներկայացրեց հատվածներ գրողի գործերից:

**ՎԱՆԻԿ ՍԱՆԹՐՅԱՆ**

## «ԱՐՓԱ» միջազգային կինոփառատոնը նոյեմբերի 29-ից դեկտեմբերի 2-ը

Լոս Անջելեսում գործող ֆիլմարտադրության, երաժշտության եւ ընդհանրապես արվեստների խթանմանը ծառայող «ԱՐՓԱ հիմնադրամի» տարեկան գլխավոր իրադարձությունը հանդիսացող «ԱՐՓԱ միջազգային կինոփառատոնը» այս տարի իր գոյառման 15-րդ տարեդարձն է նշելու Լոս Անջելեսի եգիպտական թատրոնում նոյեմբերի 29-ից դեկտեմբերի 2-ը:

Ըստ «Արմինյն միրոր-սփեքթեյթր» շաբաթաթերթի տեղեկատվության, ցուցադրվելու են ավելի քան 25 երկրների արտադրության 40-ից ավելի ֆիլմեր, այդ թվում նաեւ Հայաստանում նկարահանված ռեժիսոր Գոռ Կիրակոսյանի «Կորած եւ գտնված Հայաստանում» կատակերգությունը՝ Ջեյմի Քենեդիի եւ Անժելա Սարաֆյանի խաղարկությամբ եւ Նատալյա Բելյաուսկենայի «Եթե բոլորը» ֆիլմը Միքայել Պողոսյանի դերակատարությամբ:

Մրցանակաբաշխության եզրափակիչ հանդիսությունը տեղի է ունենալու «Շերատոն Յունիվերսալում»: Մրցանակների թվում դարձյալ լինելու են Արմին Վեգների անվան մարդասիրական մրցանակը, որը շնորհվում է 2002 թվականից, եւ ֆիլմարվեստին երկար ծառայության համար հատկացված մրցանակը:

**Հ. Ծ.**

# Հենրիխ Մխիթարյան. «Լոնդոնում այլ ֆուտբոլ կլինի»

***Ֆուտբոլի չեմպիոնների լիգայի խմբային մրցաշարի 4-րդ տուրում E խմբում հանդես եկող Դոնեցկի «Շախտյորն» այսօր Լոնդոնում կհյուրընկալվի «Չելսիին», որին 2 շաբաթ առաջ սեփական հարկի տակ հաղթել էր 2-1 հաշվով: Լոնդոնի «Ստեմֆորդ Բրիջ» մարզադաշտում խաղը կսկսվի Երեւանի ժամանակով 23:45-ին: Առաջին շրջանից հետո Դոնեցկի «Շախտյորը» 7 միավորով վստահորեն գլխավորում է E խմբի մրցաշարային աղյուսակը: «Չելսին» 4 միավորով 2-րդ տեղում է: «Յուվենտուսը» վաստակել է 3 միավոր եւ այսօր սեփական հարկի տակ մրցելու է դանիական «Նորդշելանի» հետ, որը 1 միավորով եզրափակում է աղյուսակը: «Շախտյորը» հիանալի հնարավորություն ունի մտնելու 1/8 եզրափակիչ: Դրա համար թիմը պետք է Լոնդոնում չպարտվի:***

***«Չելսին» խաղից 2 օր առաջ է ուղեւորվել Լոնդոն, որտեղ էլ սկսել է անմիջական նախապատրաստությունը վճռորոշ հանդիպմանը: Խաղի նախօրեին «Շախտյորի» պաշտոնական կայքի թղթակիցը հարցազրույց է ունեցել Հենրիխ Մխիթարյանի հետ, որը ներկայացնում ենք «Ազգի» ընթերցողներին:***



**- Հենրիխ, Ուկրաինայի առաջնության վերջին տուրի հանդիպմանը որակազրկման պատճառով ստիպված էիր հետեւել տրիբունայից: Այնտեղի՞ց է ավելի դժվար թիմի համար ցավելը, թե երբ գտնվում ես խաղադաշտում:**

- Միշտ էլ տարբեր կերպ ես ցավում: Իհարկե, հաճելի չէ, երբ թիմը խաղում է, իսկ դու որքան էլ որ ցանկանում ես, սակայն չես կարող օգնել խաղընկերներիդ: Ուստի տրիբունայում ավելի շատ ես անհանգստանում եւ հուզվում, քան խաղադաշտում գտնվող ֆուտբոլիստները:

**- Զգո՞ւմ ես, որ «Շախտյորը» Լոնդոն է մեկնում խմբի առաջատարի կարգավիճակով:**

- Մենք գնում ենք «Չելսիի» հետ մրցելու: Կաշխատենք խաղադաշտում ցուցադրել այն ամենը, ինչին ընդունակ ենք: Եվ եթե հաջողվի դրական արդյունքի հասնել, այդ ժամանակ էլ մեզ առաջատար կզգանք:

**- Ինչո՞վ էր առանձնահատուկ 2 շաբաթ առաջ Դոնեցկում «Չելսիի» հետ կայացած հանդիպումը:**

- Մենք շատ լավ էինք նախապատրաստվել այդ հանդիպմանը: Սակայն Լոնդոնում այլ ֆուտբոլ կլինի: Համոզված եմ, որ «Չելսին» խորապես վերլուծել է մեր խաղը, ավելի լավ է ուսումնասիրել մրցակցին: Մեզ շատ բարդ խաղ է սպասվում:

**- Չեմպիոնների լիգայի մրցախաղերը տարբերվում են առաջնության հանդիպումներից: Այստեղ 2 թիմերն էլ հարձակվում են, ցանկանում են հաղթել:**

- Այո՛, իհարկե, խաղերն իրոք տարբեր են: Տարբեր թիմերի հետ խաղալն ավելի հետաքրքրական է, քան առաջնությունում միեւնույն մրցակիցների հետ մի քանի անգամ հանդիպելը: Առաջնության հանդիպումներում սխալվելու դեպքում միշտ չէ, որ կարող ես պատժվել: Հավանականությունը 50:50 է: Իսկ ահա չեմպիոնների լիգայում քո սխալը կարող է թիմի համար ճակատագրական լինել, բաց թողած գոլի պատճառ դառնալ:

**- Այսինքն նման հանդիպումներում վարպետությունն ավելի վա՞ռ է դրսեւորվում:**

- Այո: Զգում ես, որ սխալվելու իրավունք չունես: Հարկավոր է առավել ուշադիր եւ կենտրոնացված գործել:

# Խորեն Գեւորն այս անգամ պարտությունը հանգիստ ընդունեց

Հայազգի պրոֆեսիոնալ բռնցքամարտիկ Խորեն Գեւորը Տրոիցկում կայացած 10-ռաունդանոց մենամարտում միավորներով (90-100, 90-100, 91-99) պարտվեց WBC Baltic վարկածով 2-րդ միջինքաշային կարգում չեմպիոն, ռուսաստանցի Մաքսիմ Վլասովին: Ողջ մենամարտի ընթացքում ռուսաստանցի բռնցքամարտիկը բավականին ակտիվ էր: Միայն վերջին ռաունդներում Խորեն Գեւորը մի փոքր ակտիվացավ ու փորձեց բեկում մտցնել մրցակցությունում, սակայն դա նրան չհաջողվեց:

Վերջին 8 մենամարտերում սա Խորեն Գեւորի 6-րդ պարտությունն էր: Ընդհանուր առմամբ Գեւորը 41 մենամարտերից 9-ում է պարտվել, 32-ում հաղթել է: Վերջին հաղթանակը նա տոնել է անցյալ տարվա հոկտեմբերի 3-ին` Ամստերդամում 10-ռաունդանոց մենամարտում առավելության հասնելով Օլեգ Ֆեդոտովի նկատմամբ: Այդ մենամարտի 6-րդ ռաունդում հայ բռնցքամարտիկը մրցակցին նոկաուտի էր ենթարկել:

Մաքսիմ Վլասովը պրոֆեսիոնալ ռինգում 25 մենամարտ է անցկացրել, որից միայն մեկում է պարտվել:

Հատկանշական է, որ մենամարտից առաջ ռուսական Sportbox.ru կայքում «Ռեցիդիվիստ բռնցքամարտիկը» վերնագրով նյութ էր տպագրվել Խորեն Գեւորի մասին: Հեղինակն ընթերցողներին հիշեցրել էր անցյալ տարվա ապրիլին WBO-ի վարկածով աշխարհի չեմպիոն Ռոբերտ Շտիգլիցի հետ մենամարտում Խորեն Գեւորի անվայելուչ պահվածքի մասին: Ըստ հոդվածի հեղինակի, Գեւորը շատ ագրեսիվ սկսեց մենամարտը, սակայն Շտիգլիցը ողջ հանդիպման ժամանակ զգալի առավելություն ուներ եւ հարվածներն էլ ավելի դիպուկ էին: Արդեն 3-րդ ռաունդում նրա հարվածից հետո Գեւորի ձախ աչքի շրջակայքում պատռվածք էր առաջացել:

Հայ բռնցքամարտիկը մի քանի անգամ արգելված հարվածներ կատարեց, որի պատճառով ի վերջո զգուշացվեց: 9-րդ ռաունդում բռնցքամարտիկները բախվեցին միմյանց, որի հետեւանքով Շտիգլիցի աջ աչքի



շրջակայքում պատռվածք առաջացավ: Մրցավարը որոշեց դադարեցնել մենամարտն ու որակազրկել Խորեն Գեւորին: Վերջինս բորբոքված այդ որոշումից, հարձակվեց մրցավարի վրա` փորձելով հաշվեհարդար տեսնել նրա նկատմամբ:

Անցյալ տարեվերջին էլ, երբ Գեւորի 6-ամսյա որակազրկումն ավարտվել էր, նա Բեյկեր Բարակատի հետ մենամարտը տանուլ տալուց հետո էր փորձել հարվածել մրցավարին: Հանդերձարանում էլ նա չէր հանդարտվել ու ստիպված էին եղել ոստիկաններին հրավիրել: Հայ բռնցքամարտիկը հրաշքով էր փրկվել ցմահ որակազրկումից:

Մենամարտից առաջ նշված հոդվածի առիթով Մաքսիմ Վլասովը հետեւյալն էր նշել. «Ինչպես երեւում է, Գեւորի սկանդալային վարքագիծը պայմանավորված է նրա անառողջ հոգեկան իրավիճակով: Լարված իրադրություններում նրան ոչ միշտ է հաջողվում զսպել իրեն: Դա նրա գործն է: Ես պատրաստ եմ նման երեւույթներին դիմագրավելու: Լավագույն հակաթույնը հուսալի պաշտպանությունն է: Մենք մարզչիս հետ հիմնական շեշտը դնում ենք հենց դրա վրա, նոր միայն մտածում ենք մրցակցին հարվածելու մասին: Իմ մարտավարությամբ թույլ չեմ տա, որ Գեւորը հարձակում գործի իմ վրա»:

ՇԱԽՄԱՏ

# Արոնյանը միաժամանակյա խաղի սեանս անցկացրեց




**Շախմատի համաշխարհային օլիմպիադայի եռակի չեմպիոն Լեւոն Արոնյանը երեկ Տիգրան Պետրոսյանի անվան շախմատիստի տանը միաժամանակյա խաղի սեանս է անցկացրել լրատվամիջոցների ներկայացուցիչների, հաշմանդամների եւ շախմատասերների հետ: Դա անցկացվել է «Սպորտը հանուն հավասար հնարավորությունների» խորագրով անցկացվող միջոցառումների շրջանակում: Լեւոն Արոնյանն արդեն 3-րդ անգամ է մասնակցում նման միջոցառմանը, որի նպատակն է հանրության ուշադրությունը հրավիրել հաշմանդամների խնդիրների վրա, նրանց համար ստեղծել հավասար հնարավորություններ աշխատելու եւ սպորտով զբաղվելու համար:**

**Այս միջոցառումը համատեղ կազմակերպել են «Հույսի կամուրջ», «Առաքելություն Արեւելք» կազմակերպությունները, Տիգրան Պետրոսյանի անվան շախմատիստի տունն ու շախմատի Հայաստանի ֆեդերացիան:**

# Դավիթ Պետրոսյանը հաղթողին զիջեց լրացուցիչ գործակցով

**Հնդկաստանում անցկացված շախմատի մրցաշարում հաջող ելույթ ունեցավ գրոսմայստեր Դավիթ Պետրոսյանը: Նա 11 հնարավորից վաստակելով 8,5 միավոր, լրացուցիչ գործակիցներով գրավեց 3-րդ տեղը: Նույնպիսի արդյունքով մրցաշարի հաղթող ճանաչվեց բանգլադեշցի Էնամուլ Հոսեյնը, իսկ 2-րդ տեղը գրավեց հնդիկ Ադհիբանը:**

**Դավիթ Պետրոսյանը 11 պարտիաներում տոնեց 7 հաղթանակ, 3-ն ավարտեց ոչ-ոքի, կրեց մեկ պարտություն: Նա անհաջողության մատնվեց 2-րդ տուրում` զիջելով հնդիկ Յոշիին:**

**Մրցաշարին մասնակցած հայ մյուս գրոսմայստերը` Գեւորգ Հարությունյանը 7,5 միավորով գրավեց 18-րդ տեղը: Նա տոնեց 6 հաղթանակ, 3 պարտիա ավարտեց ոչ-ոքի, կրեց 2 պարտություն: Մրցաշարին մասնակցեցին 163 շախմատիստներ:**

# Առեւանգել են Հալկի քրոջը

**Բրազիլիայում առեւանգել են Սանկտ Պետերբուրգի «Զենիթի» հարձակվող Հալկի կրտսեր քրոջը` Անժելիկա Վիյերային: Առեւանգումը տեղի է ունեցել ռեստորանի շրջակայքում, որտեղ աղջիկը գտնվում էր իր ընկերոջ` Պերեյրո Սիլվայի հետ, որն այդ օբյեկտի մենեջերն է: Ռեստորանին մոտեցել էր մի մեքենա, որից դուրս էին եկել դիմակավորված մի քանի անձինք ու առեւանգել էին աղջկան: Տեղի ունեցածը շոկի մեջ էր գցել աղջկա ընկերոջը, որին տեղափոխել էին հիվանդանոց: Սիլվան իրեն արդեն լավ է զգում եւ դուրս է գրվել հիվանդանոցից:**

**Քաղաքի ոստիկանության բաժանմունքի պետ Անրի Ֆաբինո հայտարարել է, որ անհայտ հանցագործները դեռեւս կապ չեն հաստատել ու իրենց պահանջները չեն ներկայացրել: Հալկի ընտանիքը ներկայումս գտնվում է ոստիկանության հսկողության տակ: Այս միջադեպի առիթով «Զենիթի» հարձակվողը մտադիր չէ հայրենիք վերադառնալ, թեեւ վնասվածքի պատճառով չի մասնակցելու առաջիկա խաղին:**

# Մեկնարկում անակնկալներ չգրանցվեցին

**Լոնդոնում մեկնարկել է թենիսի տղամարդկանց աշխարհի ոչ պաշտոնական առաջնությունը, որի պարգեւներն են վիճարկում 8 ուժեղագույն թենիսիստները: Վնասվածքի պատճառով մրցաշարին չի մասնակցում իսպանացի Ռաֆայել Նադալը: Իսկ ահա թենիսիստների համաշխարհային դասակարգման առաջատարներ Ռոջեր Ֆեդերերն ու Նովակ Ջոկովիչը բացի գլխավոր մրցանակի համար պայքարելուց, մրցավեճի են բռնվել նաեւ մրցաշրջանը 1-ին հորիզոնականում ավարտելու համար: Առայժմ ցուցակը գլխավորում է շվեյցարացի Ռոջեր Ֆեդերերը, որը 195 միավորով գերազանցում է սերբ Նովակ Ջոկովիչին:**

**Նախնական փուլում թենիսիստները բաժանվել են 2 խմբի: A խմբում ընդգրկվել են սերբ Նովակ Ջոկովիչը, բրիտանացի Էնդի Մարեյը, չեխ Թոմաշ Բերդիխն ու ֆրանսիացի Ժո Վիլֆրեդ Ցոնգան:**

**B խմբում պայքարի մեջ են ներգրավվել շվեյցարացի Ռոջեր Ֆեդերերը, իսպանացի Դավիթ Ֆեռերը, արգենտինացի Խուան Մարտին դել Պոտրոն եւ սերբ Յանկո Տիպսարեւիչը:**

**Մրցաշարը մեկնարկեց Էնդի Մարեյի եւ Թոմաշ Բերդիխի մրցախաղով: Դա մրցակիցների արդեն 8-րդ հանդիպումն էր պրոֆեսիոնալ թենիսում եւ 4-րդն` ընթացիկ մրցաշրջանում: Առավելությունը չեխ թենիսիստի կողմն էր, որը հաղթել էր նախորդ 4 մրցախաղերում: Իսկ ահա այս տարի կայացած մրցախաղերից 2-ում` Դուբայում եւ ԱՄՆ-ի բաց առաջնությունում առավելության էր հասել Էնդի Մարեյը: Վերջինս այս անգամ էլ հաղթեց մրցակցին: Ճիշտ է, առաջին խաղափուլն անհաջող դասավորվեց Մարեյի համար, որը պարտվեց 3-6 հաշվով: Սակայն հաջորդ 2 խաղափուլերում բրիտանացի թենիսիստը հաղթեց (6-3, 6-4):**

**A խմբի մյուս խաղում կորտ դուրս եկան Նովակ Ջոկովիչն ու Ժո Վիլֆրիդ Ցոնգան: Այս հակամարտությունում առավելությունը Ջոկովիչի կողմն է, որը 8 հաղթանակ է տոնել, 5-ում պարտվել է: Ընդ որում այս տարի Ցոնգայի հետ անցկացրած բոլոր 4 մրցախաղերում էլ Ջոկովիչը հաղթել էր: Եվ ահա Լոնդոնում նա 5-րդ անգամ պարտության մատնեց մրցակցին (7-6, 6-4):**

*Էջը պատրաստեց* ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

## «Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» ՊՈԱԿ-ը հայտարարում է մրցույթ՝ հետեւյալ թափուր աշխատատեղերի համար

**Գեղարվեստական կրթության ֆակուլտետ**

**Արվեստի պատմության, տեսության եւ մշակութաբանության ամբիոնի մասնագետ՝** հետեւյալ գործառույթներով եւ հմտություններով / համառոտ նկարագիր/

1. ապահովել ամբիոնի ուսումնակազմակերպչական աշխատանքները,
2. կատարել ամբիոնի վարիչի հանձնարարականները,
3. տիրապետել համակարգչային գիտելիքներին եւ առնվազն մեկ օտար լեզվի (այդ թվում ռուսերեն):

**Խմբավարության եւ ձայնադրման ամբիոնի մասնագետ՝ հետեւյալ գործառույթներով եւ հմտություններով / համառոտ նկարագիր/**

1. ապահովել ամբիոնի ուսումնակազմակերպչական աշխատանքները,
2. կատարել ամբիոնի վարիչի հանձնարարականները,
3. տիրապետել համակարգչային գիտելիքներին եւ առնվազն մեկ օտար լեզվի (այդ թվում ռուսերեն):

Հատուկ կրթության ֆակուլտետ

**Դեկանի օգնական՝** հետեւյալ գործառույթներով եւ հմտություններով /համառոտ նկարագիր/

1. դեկանատի ընթացիկ աշխատանքների կազմակերպում, դեկանի հանձնարարականների կատարում,
2. ուսանողների հետ կապված կազմակերպչական եւ փաստաթղթաշրջանառության իրականացում,
3. տիրապետել համակարգչային գիտելիքներին եւ առնվազն մեկ օտար լեզվի (այդ թվում ռուսերեն):

Դիմել ցանկացողները Կադրերի բաժին պետք է ներկայացնեն հետեւյալ փաստաթղթերը.

▼ դիմում ռեկտորի անունով (նշել այն աշխատատեղը, որին հավակնում է դիմող անձը),
▼ ինքնակենսագրություն (CV տեսքով),
▼ տվյալ աշխատատեղի համար պահանջվող կրթությունը հավաստող փաստաթղթերի պատճենները,
▼ անձնագրի պատճեն,
▼ հավակնորդը կարող է ներկայացնել նաեւ երաշխավորագիր-նամակ:

Փաստաթղթերն ընդունվում են մինչեւ սույն թվականի նոյեմբերի 14-ը:

Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել ք. Երեւան, Խանջյան 5, 200 սենյակ՝
Կադրերի բաժին
Հեռ.՝ 59 70 84

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՊԱՐԶԵՑՎԱԾ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

**Հայտարարության սույն տեքստը հաստատված է պարզեցված ընթացակարգի հանձնաժողովի 2012 թվականի « հոկտեմբեր» «30»-ի թիվ «1» որոշմամբ**

**Պարզեցված ընթացակարգի ծածկագիրը՝ ՀՍԿ-ՊԸ-ԾՁԲ 12/14**

Պատվիրատուն՝ <Հայրենիք-սփյուռք կենտրոն> պետական ոչ առեւտրային կազմակերպությունը, որը գտնվում է ք. Երեւան, Հանրապետության 49, սեն. 9 հասցեում, հայտարարում է պարզեցված ընթացակարգ:

Պարզեցված ընթացակարգում հաղթող ճանաչված մասնակցին սահմանված կարգով կառաջարկվի կնքել «Քաղաքագետների եւ միջազգայնագետների համահայկական համաժողովի կազմակերպում» ծրագրով նախատեսված ծառայությունների մատուցման պայմանագիր (այսուհետեւ՝ պայմանագիր):

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ պարզեցված ընթացակարգի հայտեր կարող են ներկայացնել բոլորը, անկախ նրանց՝ օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Պարզեցված ընթացակարգին մասնակցելու իրավունք չունեն անձինք, որոնք դատական կարգով ճանաչվել են սնանկ, ունեն ժամկետանց պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային եւ պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով, որոնց գործադիր մարմնի ներկայացուցիչը հայտը ներկայացնելու պահին նախորդող երեք տարիների ընթացքում դատապարտված է եղել տնտեսական գործունեության կամ պետական ծառայության դեմ ուղղված հանցագործության համար, բացառությամբ այն դեպքերի, երբ դատվածությունը օրենքով սահմանված կարգով հանված կամ մարված է, որոնք ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող՝ մասնագիտական գործունեության համապատասխանություն՝ պայմանագրով նախատեսված գործունեությանը, մասնագիտական փորձառություն, ֆինանսական միջոցներ, աշխատանքային ռեսուրսներ:

Հաղթող մասնակիցը որոշվում է բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով, որի հետ կնքվում է պայմանագիր:

Սույն ընթացակարգի հրավերը ստանալու համար անհրաժեշտ է դիմել պատվիրատուին, մինչեւ սույն հայտարարության հրապարակման օրվանից հաշված՝ «9»-րդ օրացուցային օրը ժամը «10:00»-ն: Ընդ որում փաստաթղթային ձեւով հրավեր ստանալու համար պատվիրատուին պետք է ներկայացնել գրավոր դիմում: Պատվիրատուն ապահովում է փաստաթղթային ձեւով հրավերի տրամադրումն անվճար : Էլեկտրոնային ձեւով հրավեր տրամադրելու պահանջի դեպքում պատվիրատուն ապահովում է հրավերի՝ էլեկտրոնային ձեւով տրամադրումը դիմումն ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվա ընթացքում:

Սույն հրավերով նախատեսված կարգով հրավեր չստանալը չի սահմանափակում մասնակցի՝ սույն ընթացակարգին մասնակցելու իրավունքը:

Պարզեցված ընթացակարգի հայտերն անհրաժեշտ է ներկայացնել «Հայրենիք-սփյուռք կենտրոն» ՊՈԱԿ, ք. Երեւան, Հանրապետության 49, սեն. 9 հասցեով, փաստաթղթային ձեւով մինչեւ սույն հայտարարությունը հրապարակման օրվանից հաշված «10»-րդ օրացուցային օրվա ժամը «11:00»-ն եւ դրանք պետք է կազմված լինեն հայերեն:

Սույն ընթացակարգի վերաբերյալ բողոքները ներկայացվում են Գնումների աջակցման կենտրոն՝ ք. Երեւան, Կոմիտասի 54/բ հասցեով: Բողոքարկումն իրականացվում է սույն հրավերի 1-ին մասի 12-րդ բաժնով սահմանված կարգով:

Մասնակիցների որակավորման տվյալների՝ ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին համապատասխանությունը գնահատելու համար, մասնակիցները պետք է պատվիրատուին ներկայացնեն ընթացակարգի հրավերով նախատեսված փաստաթղթեր:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող Տիգրան Մարտիրոսյանին:

*Հեռախոս՝52-14-10:*
*Էլ.փոստ՝spyurkpoak@yahoo.com:*

***Պատվիրատու՝ «Հայրենիք-սփյուռք կենտրոն» պետական ոչ առեւտրային Կազմակերպություն:***

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության դիվանագիտական դպրոցը (Հայաստանի դիվանագիտական դպրոց) հայտարարում է «Միջազգային հարաբերություններ և դիվանագիտություն» 2013թ. դասընթացի մասնակցության մրցույթ:

Ընդունելության մրցույթին կարող են մասնակցել բարձրագույն կրթություն ունեցող, մինչև 30 տարեկան ՀՀ քաղաքացիներ, ովքեր ստացել են ՀՀ կառավարության 2002թ. փետրվարի 3-ի N 121 որոշմամբ հաստատված «Դիվանագիտական ծառայության պաշտոն զբաղեցնելու համար անհրաժեշտ բարձրագույն կրթական մասնագիտությունների ցանկով»* սահմանված որակավորում:

Դասավանդման լեզուներն են հայերենը, անգլերենը և ռուսերենը: Նշված լեզուների գերազանց իմացությունը պարտադիր է: Դասընթացները վարում են ՀՀ ԱԳՆ բարձրաստիճան դիվանագետները և արտերկրի առաջատար բուհերից հրավիրված բարձրակարգ դասախոսներ:

Դասընթացը կմեկնարկի 2013թ. փետրվարին և կավարտվի 2013թ. դեկտեմբերին: Ուսումն անվճար է:

Պահանջվող փաստաթղթերի ցանկին կարելի ծանոթանալ և դիմումի ձևը բեռնել դիվանագիտական դպրոցի կայքից՝ http://www.diplomaticacademy.am/hy/ կամ http://www.diplomaticschool.am/hy/ հասցեներով:

Պահանջվող փաստաթղթերը ներկայացրած դիմորդները 2013թ. հունվարին կհրավիրվեն գրավոր քննության (միջազգային հարաբերությունների / արտաքին քաղաքական թեմայով աշխատանք նշված երեք լեզուներով): Գրավոր քննությունը հաջողությամբ անցած դիմորդները կհրավիրվեն հարցազրույցի, որը կարող է անցկացվել վերոնշյալ երեք լեզուներով: Լավագույն 25 դիմորդները հնարավորություն կստանան մասնակցել դասընթացին:

Ուսումնական ծրագիրը կազմված է տեսական և գործնական առարկաներից: Դասավանդվող առարկաներից ունկնդիրները կհանձնեն ընթացիկ քննություններ, որոնց արդյունքները, ավարտական քննության, հաճախումների և պրակտիկայի գնահատականների հետ, մաս կկազմեն հանրագումարային գնահատականի: Դասընթացը հաջողությամբ ավարտած ունկնդիրները կստանան ավարտական վկայական: Լավագույն շրջանավարտները, ՀՀ օրենքների պահանջներին համապատասխան, կարող են աշխատանքի ընդունվել ՀՀ ԱԳ նախարարությունում:

Դասընթացն անցկացվելու է Դիվանագիտական դպրոցում (Հանրապետության Հրապարակ, Կառավարության 2-րդ շենք): Դասերն անցկացվելու են ամեն աշխատանքային օր:

Փաստաթղթերի ընդունումը կատարվելու է ս.թ նոյեմբերի 17-ից մինչև դեկտեմբերի 28-ը ներառյալ, ՀՀ դիվանագիտական դպրոցում՝ Հանրապետության Հրապարակ, Կառավարության 2-րդ շենք, Երևան 0010 հասցեով, յուրաքանչյուր աշխատանքային օր՝ ժ. 10.00-13.00:

Լրացուցիչ տեղեկությունների անհրաժեշտության դեպքում դիմորդները կարող են դիմել ԱԳՆ դիվանագիտական դպրոց, 010583928 (ներքին՝ 221) հեռախոսահամարով կամ h.israelian@mfa.am և h.israelian@diplomaticacademy.am էլեկտրոնային հասցեներով:

** «Դիվանագիտական ծառայության պաշտոն զբաղեցնելու համար անհրաժեշտ բարձրագույն կրթական մասնագիտությունների ցանկին» և «Ծառայողական պարտականությունների և լիազորությունների իրականացմանը խոչընդոտող հիվանդությունների ցանկին» կարելի է ծանոթանալ դիվանագիտական դպրոցի կայքում:*

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

### աճուրդի կազմակերպման եւ անցկացման մասին

ՀՀ ֆինանսների նախարարության «Մետաղափորձական պալատ» պետական ոչ առեւտրային կազմակերպության լուծարային հանձնաժողովը հայտարարում է կազմակերպության գույքի աճուրդ վաճառք բաց դասական եղանակով՝ առանձին լոտերով:

- Աճուրդին մասնակցելու համար պետք է ներկայացվեն՝
- Ֆիզիկական անձի դեպքում՝ անձնագրի պատճենը, իսկ իրավաբանական անձանց եւ անհատ ձեռնարկատերերի դեպքում՝ դրանց պետական գրանցումը հավաստող փաստաթղթերի պատճենները,

աճուրդի մասնակցության վճարի եւ նախավճարի վճարումն հավաստող փաստաթղթերը:

Մասնակցության վճարը եւ նախավճարը կազմում են տվյալ լոտի մեկնարկային գնի համապատասխանաբար 1% եւ 5%-ը:

Աճուրդին մասնակցելու վճարը եւ նախավճարը պետք է վճարվի փոխանցումով «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ-ի 163028226310 հ/հ («Մետաղափորձական պալատ» պետական ոչ առեւտրային կազմակերպություն, ՀՎՀՀ 01240034), մինչեւ աճուրդին նախորդող օրը ներառյալ:

Աճուրդում հաղթող մասնակից է համարվում աճուրդում առավել բարձր գին առաջարկած մասնակիցը:

Աճուրդին մասնակցել ցանկացողները կարող են հայտեր ներկայացնել մինչեւ 2012 թվականի նոյեմբերի 19-ը ներառյալ աշխատանքային օրերին՝ ժ.09:30-17:30-ը ՀՀ ֆինանսների նախարարության շենքի (ք. Երեւան, Մելիք-Ադամյան 1) 215 սենյակ:

Աճուրդը տեղի կունենա 2012 թվականի նոյեմբերի 27-ին՝ ժ. 15:00-ից ՀՀ ֆինանսների նախարարության շենքում, ք. Երեւան, Մելիք-Ադամյան 1 հասցեով:

Լոտերին, գույքի գնահատված արժեքին եւ մեկնարկային գներին կարող եք ծանոթանալ www.minfin.am կայքում՝ http://minfin.am/up/anonces/havelvacner/Documenttt.xls:

Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարել (010)595218 հեռախոսահամարով:

***ՀՀ ֆինանսների նախարարություն***

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական եւ հաշվապահական հաշվառման վարչության ֆինանսական բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր թափուր պաշտոնը համալրելու նպատակով պահանջվում է տնտեսագիտություն (էկոնոմիկա) մասնագիտության գծով բարձրագույն կրթություն ունեցող մասնագետ, ով վերջին 5 տարիների ընթացքում աշխատել է նշյալ մասնագիտությամբ եւ համապատասխանում է քաղաքացիական ծառայության գլխավոր պաշտոն զբաղեցնելու պահանջներին:

Տեղեկություններ ստանալու համար զանգահարել՝ 055-56-15-01, 010-56-15-01 հեռախոսահամարներով:

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՊԱՐԶԵՑՎԱԾ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

### Պարզեցված ընթացակարգի ծածկագիրն է՝ ՀՀ ԴԴ ՊԿՀ-ՊԸԱՊՁԲ -03/12

Պատվիրատուն՝ «ՀՀ Դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ն, որը գտնվում է ք. Երեւան, Վ. Սարգսյան 5 հասցեում, հայտարարում է պարզեցված ընթացակարգ:

Պարզեցված ընթացակարգում հաղթող ճանաչված մասնակցին սահմանված կարգով կառաջարկվի կնքել Սեյֆ-չհրկիզվող պահարանների գնման /մատակարարման/ պայմանագիր (այսուհետեւ՝ պայմանագիր):

Սույն ընթացակարգի վերաբերյալ առավել մանրամասն տեղեկություններ ստանալու համար անհրաժեշտ է այցելել ՀՀ ֆինանսների նախարարության ՀՀ գնումների համակարգ WWW. gnumner.am էլեկտրոնային հասցեով, azdarad.am էլեկտրոնային հասցեով, կամ դիմել Պատվիրատուին՝ «ՀՀ Դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ին՝ ք. Երևան, Վ. Սարգսյան 5 հասցեով, Գնումների համակարգման բաժնի ավագ մասնագետ Զ. Աբգարյանին (հեռ. 010 511-787) մինչև 14.11.2012 թվականի ժամը 11:00-ն (ոչ աշխատանքային օր լինելու դեպքում դրան հաջորդող աշխատանքային օրը), դրանք պետք է կազմված լինեն հայերեն:

ՀՀ, ք. Երեւան, Ագաթանգեղոսի 6/1 հասցեում տեղի կունենա «Ֆլորես» Աճուրդի Տուն ՍՊ ընկերության (այսուհետ՝ Կազմակերպիչ) կողմից կազմակերպված բաց աճուրդը: Աճուրդի ընթացքում վաճառվելու է «Առէկսիմբանկ-Գազպրոմբանկի Խումբ» ՓԲԸ-ին օտարման իրավունքով պատկանող հետեւյալ լոտը՝

1. Հողամաս, ընդ. մակերեսն է՝ 1.55 հա : Լոտի գտնվելու վայրի հասցեն է՝ ՀՀ, Կոտայքի մարզ, ք. Ծաղկաձոր, Մ. Մկրտչյան փողոց, թիվ 48: Լոտի մեկնարկային գինը՝ 264000000 ՀՀ դրամ:

Գույքը գրավադրված է: Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝ ֆիզիկական անձանց համար անձը հաստատող փաստաթուղթ եւ Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝ աճուրդի վկայական), որը հաստատելու է նաեւ նախավճարի մուծման փաստը, իսկ իրավաբանական անձանց համար՝ կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի կամ ներկայացուցչի լիազորությունները հաստատող փաստաթուղթ եւ աճուրդի վկայական: Աճուրդի մասնակցության նախավճարը սահմանված է մեկնարկային գնի 2%-ի չափով, որը պետք է վճարվի Կազմակերպչի դրամարկղ կամ բանկային հաշվին («ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ում 16048053452000 հաշվեհամարին) սույն ծանուցման հրապարակման պահից մինչեւ յուրաքանչյուր աճուրդային փուլին նախորդող աշխատանքային օրվա ժ. 16:00-ն, ինչի կապակցությամբ տրվում է աճուրդի վկայական: Աճուրդի առաջին փուլը դասական եղանակով՝ 23.11.2012թ.-ին ժ. 12:00-ին, այնուհետեւ փուլերը՝ 26.11.2012թ.-ին ժ. 12:00-ին եւ հաջորդող աշխատանքային օրերին նույն ժամին հոլանդական եղանակով, յուրաքանչյուր փուլում մեկնարկային գնի իջեցումով: Աճուրդի ավարտը՝ 30.12.2012թ.:

Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, ով առաջարկել է ամենաբարձր գինը: Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակից: Աճուրդին մասնակցած, սակայն չհաղթած անձի մուծած նախավճարը վերադարձվում է աճուրդն ավարտվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Նախավճարը ենթակա է վերադարձման, եթե աճուրդը համարվում է չկայացած: Եթե աճուրդում հաղթող ճանաչված անձը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առուվաճառքի պայմանագիրը, ապա նա կորցնում է իր մուծած նախավճարը: Եթե աճուրդի կազմակերպիչը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առուվաճառքի պայմանագիրը, ապա նա պարտավոր է աճուրդում հաղթող ճանաչված անձին վերադարձնել նախավճարը: Լոտը կարող է ուսումնասիրվել սույն ծանուցման հաջորդ օրվանից մինչեւ աճուրդի ավարտի օրվանը նախորդող աշխատանքային օրը, ժ. 11:00-ից մինչեւ 17:00-ը՝ վերը նշված հասցեներով: Սույն ծանուցումը կարող է փոփոխվել մամուլում հրապարակվելու միջոցով: Աճուրդի անցկացման կանոնակարգին կարող եք ծանոթանալ եւ անվճար ստանալ կանոնակարգի պատճենը, դիմելով Կազմակերպչին՝ ք.Երեւան, Ագաթանգեղոսի 6/1 հասցե: Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել (010) 56-31-15 հեռախոսահամարով:

www.azg.am

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60, 060 271112

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝ 6.11.2012, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Տիգրան Մեծ» հրատարակչութեան տպարանում՝ Արշակունեաց 2: